

ՄԱՐԶԻԿ

հսկս

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

337- ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 1 (379) - VOL. XXXIII N° 1

السنة الثالثة والثلاثون - العدد رقم ١

marzig

SPORTS MAGAZINE



ՍԱՆ ԱՆՏՈՆԻՈՒ-ՏԵԽԱՍ
SAN ANTONIO-TEXAS

ԹԲԻԼԻՍԻ
TBILISI

ԾԱՂԿԱԶՈՐ
TSAGHKADZOR

ԵՐԵՎԱՆ
YEREVAN

ՎԱՐԴԵՆԻՍ
VARDENIS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ԻՆ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԷ 30 ՀԱՉԱՐ ՔԱՌ. ՄԵԹՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ

27 Մարտին, պետական որոշումով մը, Հայաստանի կառավարութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին տրամադրեց 30 հազար քառ. մեթր տարածութեամբ հողատարածք մը՝ անհատոյց օգտագործման իրաւունքով:

Այս մասին կատարուած պաշտօնական լրատուութիւնը հաստատեց, որ «Գործադիրի որոշումով, Երեւանի վարչական սահմանին մէջ գտնուող 3 հեկտար [30 հազար քառ. մեթր-«Մ.»] անտառային հողը, անհատոյց օգտագործման իրաւունքով, առանց ժամկետի տրամադրուած է Հայաստանի Ազգային Սկաուտական Շարժում հասարակական կազմակերպութեան, որ մանկապատանեկան, երիտասարդական, կամաւորական, արտադպրոցական,



ապաքաղաքական եւ ապառազմական կազմակերպութիւն է եւ նպատակ ունի դաստիարակել պատասխանատու, գիտակից, հասարակայնօրէն գործունեայ, հոգեպէս ամուր, հայրենասէր երիտասարդ սերունդ»:

Այս առիթով իր կատարած յայտարարութեան մէջ, վարչապետ Տիգրան Սարգսեան դրուատեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գործունէութիւնը եւ ըսաւ. «Մենք պէտք է մեր գոհունակութիւնը յայտնենք այս կազմակերպութեան՝ անցեալին կատարած աշխատանքին համար: Անոնց փորձառութիւնը ուսումնասիրելով, անոնց ծամբարները այցելելով, մենք կը տեսնենք, որ շատ ազգանուէր գործ կը կատարեն, ուստի վստահ ենք, որ այս որոշումը ճիշդ է»:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹՒՄԻՆ ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱԼԿՄԱՐ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՉ

Կիրակի, 16 Մարտ 2014-ին, Հոլանտայի Ալկմար քաղաքին մէջ հիմնուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 105-րդ մասնաճիւղը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի:

Եղբայր Մկրտիչեան այս առիթով միութեան դրօշն ու Ծրագիր-Կանոնագիրը փոխանցեց նորաստեղծ մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչին:



Յառաջացաւ մասնաճիւղին անդրանիկ վարչութիւնը՝ հինգ անդամներէ.- Եղբ. Էտուարտ Զաքարեան (ատենապետ), եղբ. Սեպուհ Աբրահամեան (ատենադպիր), քոյր Քրիստին Աւետիսեան (գանձապահ), քոյր Անահիտ Տէր Մուրատեան եւ եղբայր Շանթ Մովսէսեան (խորհրդականներ):



Նորաստեղծ մասնաճիւղը ունի սկաուտական փոքր խումբ մը եւ Ֆուլթպոլի երկու խումբ: Անդամներուն թիւն է 80, որոնցմէ 25-ը՝ 18 տարեկանէն վար: Իբրեւ գործունէութիւն, մասնաճիւղը կը կազմակերպէ հայերէն լեզուի դասընթացք, Հայ Դատի ձեռնարկներ եւ տարեկան դաշտագնացութիւն:

Յայտնենք, որ Ալկմար հոլանտական երկրորդ քաղաքն է, ուր կը գործէ Հ.Մ.Ը.Մ.: 1996-էն ի վեր Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ մը կը գործէ Ալմեյդա մէջ:



ԱՅՍ ԹԻԻԸ

33-ՐԴ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 1 (379)



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հաղորդագրություն 3
- Անդրադարձ 4
- Մասնաձիղէ Մասնաձիղ 15
- Մեր Կորուստները 37



ԲԱԺԻՆՆԵՐ

- Համահայկական Խաղեր 8
- Միջազգային 13
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



Մարզական ամսաթերթ
Հրատարակություն՝
Հ.Մ.Ը.Մ.Ի
Կեդրոնական Վարչություն

ԽՄԲԱԳԻՐ
Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշլեան-Սաղազարեան,
Մարո Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլաքնկեան
Աբօ Մոսիկեան

ԹԵՔՆԻԲ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաձեան
Colour Separation - Photogravure
Paklayan

Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ՀԱՍՑԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

ՅՐԻՌԻՄ-ՎԱՃԱՌՔ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71 239209)
վաճառքի սակն է 4000 Լ.Ո.
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ձշղուած է՝ Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Մեկուսի
եւ Հրջանային Վարչութիւնները:

www.homenetmen.org



Ն
Մ
Բ
Ա
Գ
Ր
Ա
Կ
Ա
Ն

ՏԵՒԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Առաջնորդել եւ առաջնորդուիլ, ղեկավարել եւ ղեկավարուիլ, այս է ընկերային, հասարակական, միութենական թէ ընտանեկան կեանքին հիմնական սկզբունքը:

Չկայ որեւէ հաստատութիւն, կազմակերպութիւն թէ պետութիւն, որ առանց առաջնորդի եւ ղեկավարութեան կարենայ գոյութիւն ունենալ եւ արդիւնքի հասնիլ:

Առաջնորդելու համար պէտք է խոր հաւատք ունենալ մեր քարոզած սկզբունքներուն եւ, յարատեւօրէն ու հաւատարմօրէն, մեր կեանքով հաստատել այդ սկզբունքները:

Աշխատանք մը կատարելու, ծրագիր մը յաջողցնելու հրահանգ արձակող առաջնորդը բոլորէն առաջ ի՛նք պէտք է գործնապէս օրինակ դառնայ առաջնորդուողներուն:

Ազգերու եւ միութիւններու պատմութեան մէջ կարելի է հանդիպիլ բազմաթիւ առաջնորդներու, որոնք յաջողած են իրենց հետետրոյդները նուաճումներու բարձունքին հասցնել, պարզ այն պատճառով որ հաստատ համոզումը եւ հաւատքը ունեցած են իրենց իտեալին, քաջութիւնը՝ իրենց կեանքին գնով հաստատելու առաջնորդի իրենց դերը:

Հարցը անպայման կուտքերու կամ գերբնական կարողութիւններու տէր մարդոց չի վերաբերիր: Հրաշագործութիւններու ժամանակն ալ շատոնց անցած է: Պէտք է իրապաշտ ըլլալ եւ ընդունիլ, որ հարցը շատ աւելի պարզ է:

Կեանքի առօրեան շատ դասեր կը պարունակէ իր մէջ: Մենք ամէն օր կը գործենք: Մենք ամէն օր առաջնորդի դեր

կը ստանձնենք: Սկաուտական խմբակի մը վարիչը, մարզական խումբի մը մարզիչը, մասնաճիւղի մը վարչական մէկ անդամը առաջնորդ մըն է: Ան եթէ լաւ կատարէ իրեն վստահուած պարտականութիւնը եւ յարատեւէ իր գաղափարական գործին մէջ, ինքնին յարգուած առաջնորդ մը կը դառնայ: Մեծ ու պզտիկ առաջնորդներու գումարն է, որ հաւաքականութեան մը համար տեսական արժէք կը ներկայացնէ:

Հ.Մ.Ը.Մ. այս սկզբունքով գործեց անցնող 96 տարիներուն, իբրեւ առաջնորդ ունենալով ոչ թէ հրաշագործ դէմքեր, այլ՝ բարոյական հզօր ուժով, բարեխիղճ ու յարատեւ աշխատողներ, որոնք իրենց բովանդակ կեանքը գոհաբերեցին հաւաքականութեան շահին համար, միութեան վերելքին համար, հայակերտման վեհ գործին համար: Դէմքեր, որոնք ոչ միայն բարոյական արժէքներու անունով *խօսեցան*, այլեւ՝ այդ արժէքներով *գործեցին*: Ու ոչ միայն *հաւատացին* այդ արժէքներուն, այլեւ՝ այդ արժէքներով *ապրեցան* իրենց կեանքն ու իտեալը:

Շատերը այդ դէմքերէն ունեցան համեստ եւ անշուք կեանք մը եւ, սակայն, դարձան մեծ հեղինակութիւններ, ուժ եւ հմայք ունեցող առաջնորդներ: Անոնց կենդանի օրինակը, գործի դաշտ նետուելու, ամէնէն աւելի գոհաբերուելու պատրաստականութիւնը կ'ոգեւորէ մեզ, թափ ու թռիչք կու տայ մեր շրջապատին, մեր գործին ու մեր գաղափարականին, պատուիրելով մեզ միշտ ընթանալ անոնց ուղիով, արժանի ըլլալու համար մեր անցեալին, մեր ներկային, այլ մանաւանդ՝

Մեր իտեալին
Եւ լուսապայծա՛ռ ապագային:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1 974-ին համագաղութային կառույց դառնալից ետք, Հ.Մ.Ը.Մ. իր նպատակին թելադրութեամբ իւրաքանչիւր քառամեակի՝ գաղթաշխարհի օտար ամերուսն մէջ կազմակերպեց համագաղութային ըսկառուտական բանակումներ, ապա՝ Հայաստանի մէջ վերընծիւղումով ան դարձաւ համահայկական կառույց:

Հ.Մ.Ը.Մ., հաւատարիմ իր կոչումին եւ առաքելութեան, 1994-էն ի վեր՝ հինգերորդ բանակումէն սկսեալ, համա-Հ.Մ.-Ը.Մ.ական իր բանակումները կը կազմակերպէ մայր հայրենիքի հողին վրայ՝ ի մի հաւաքելով աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները՝ զանոնք առաւել եւս հաղորդակից դարձնելով մայրենի հողին, պատմութեան, արժէքներուն ու ականդոյթներուն:

Հայաստանի մէջ կայացած իրերայաջորդ բանակումներու արձանագրած յաջողութեան շնորհիւ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները պարբերաբար արձանագրեցին մասնակցութեան թիւի աճ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի տրամադրուած հողատարածքը դարձնելով անբաւարար: Իրերայաջորդ Կեդրոնական Վարչութիւններ ակամայ դիմեցին թիւի սահմանափակումի՝ շրջանները մատնելով նեղ կացութեան:

2010-ին, 9-րդ ընդհանուր բանակումին, բանակավայր այցելեցին Հայաստանի փոխ վարչապետն ու Սփիւռքի նախարարը, որոնց պարզուեցաւ բանակավայրին հողային տարածքը եւ մասնակցողներուն թիւը: Անոնք խոստացան շուտով լուծել հողատարածքի հարցը: Կարճ ժամանակ ետք խոստումը յարգուեցաւ:

Հողատարածքը բանակատեղիի վերածելու աշխատանքը միութիւնս կը զնէր լուրջ ու նիւթապէս ծանր յանձնառութեան տակ:

10-րդ Պատգամաւորական ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը, առաջնա-

հերթ համարելով ընդհանուր բանակումներու իրագործումն ու անոնց յաջողութիւնը եւ շրջաններու պահանջը, որոշեց ոչինչ խնայել հողատարածքը բանակատեղիի վերածելու համար, եւ ի վերջոյ իր կատարած բանակցութիւնները դարձան արդիւնաւէտ:

Առ այդ, Կեդրոնական Վարչութեանս ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան կարճատեւ այցելութեամբ մը մեկնեցաւ Հայաստան եւ 21 Փետրուար 2014-ին պաշտօնական այցելութիւն մը ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին հետ՝ ներկայացնելու համար Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի այժմու բանակավայրին յարմարութիւնները եւ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԳԵՏԻՆ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐՇ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՄԻՋԵՒ

21 Փետրուարին, Հայաստանի նախագահական պալատին մէջ տեղի ունեցաւ տեսակցութիւն մը՝ նախագահ Սերժ Սարգսեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի միջեւ: Տեսակցութեան ներկայ գտնուեցաւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի պատուոյ նախագահ Գարրիէլ Չեմպերճեան:



Շուրջ մէկ ժամ տեւած տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները, երկկողմանի կապերը սերտացնելու անհրաժեշտութիւնը եւ այս իմաստով Հ.Մ.Ը.Մ.ի ունենալիք դերակատարութիւնն ու ներդրումը: Արժարձուեցաւ նաեւ հայոց ցեղասպանութեան 100-ամեակի պետական յանձնախումբի աշխատանքներուն ընթացքը:

Նախագահին հետ տեսակցութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Բիրականի բանակավայրի կացութեան, զայն բարեկարգելու եւ ընդարձակելու ծրագիրներուն: Նախագահ Սարգսեան դրական մօտեցում ցուցաբերեց այս ծրագիրներուն նկատմամբ, զանոնք նկատելով շինիչ ու կարեւոր՝ պատրաստակամութիւն յայտնելով պետական աջակցութիւն ցուցաբերելու:

Նախագահ Սարգսեանի եւ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի տեսակցութիւնը առիթ մը եղաւ նաեւ անդրադառնալու Հ.Մ.Ը.Մ.ի բազմաճիւղ եւ աշխարհատարած գործունէութեան:

անոր կից տրամադրուած հողաշերտը սարքելու անհրաժեշտութիւնը, ինչ որ հնարաւորութիւն պիտի ստեղծէ Սփիւռքէն մեծաթիւ բանակողներ հիւրընկալելու:

Նախագահ Սարգսեան գրական մօտեցում ցուցաբերեց այս ծրագիրներուն նկատմամբ՝ զանոնք նկատելով շինիչ ու կարեւոր եւ պատրաստակամութիւն յայտնեց պետական աջակցութիւն ցուցաբերել «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամի կողքին:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները միշտ երախտապարտ պիտի մնան իրենց բարերարներուն նկատմամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԻԿԸ



Համացանցի ընկերային հաղորդակցութեան միջոցներուն մէջ շրջանառութեան մէջ է համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի տեղեկատուական առաջին թերթիկը՝ Երկչեզու՝ հայերէն-անգլերէն թերթիկը պատրաստուած է բանակումի խմբապետական կազմին կողմէ եւ կը նպատակադրէ ընդհանուր տեղեկութիւններ փոխանցել համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու մասին ընդհանրապէս եւ այս ամբան տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումին մասին յատկապէս:

Իր առաջնորդող խօսքին մէջ, թերթիկը կը նշէ, թէ միայն քանի մը ամիսներ մեզ կը բաժնեն համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումէն, որ տեղի պիտի ունենայ 31 Յունիսէն 9 Օգոստոս 2014-ին, Բիւրականի բանակավայրին մէջ:

«Բանակումը, որ տեղի կ ունենայ Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին, անհերքելի ապացոյցն է հայ ժողովուրդի գոյատեւման եւ աննկուն կամքին», կը հաստատէ թերթիկը:

Ինչ անդին, թերթիկը կը տեղեկացնէ, թէ Բիւրականի բանակավայրը կը գտնուի Արագածոտնի մարզին մէջ, Երեւանէն 40 քլմ. հիւսիս-արեւմուտք, Արագած լեռան լանջին: Մարզին վարչական կեդրոնը Աշտարակ քաղաքը կը գտնուի Բասախ գետի կիրճին մէջ: Այս մարզին մէջ կը գտնուին նաեւ Բիւրականի նշանաւոր աստղադիտարանը եւ Երեւանի ընագիտութեան հիմնարկի տիեզերական ճառագայթներու հետազօտման Նոր Ամբերդի կեդրոնը:

Թերթիկը պատմական ակնարկով մը կը ներկայացնէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախորդ ինը բանակումները: Ապա, ան կը ճշդէ նման բանակումներու կազմակերպման նպատակը եւ մասնակցութեան պայմանները:

Վերջապէս, թերթիկը կը փոխանցէ նաեւ բանակումին նշանաբանը («Արագածէն Արարատ, տէրն ենք մեր դատին») եւ խորհրդանշանը, որ մտայղացումն է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանէն եղբ. Սիւրբանթո Սոմոքեանի:



8-22 Մարտ 2014-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան կազմակերպական առաքելութեամբ մը այցելեց Շուէտ, Հոլանտա եւ Ֆրանսա:

ՇՈՒԷՏԻ ՄԵՉ

Շաբաթ, 8 Մարտին, Շուէտ հասնելով, եղբ. Մկրտիչեան Վեսթերոս քաղաքին մէջ հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի մեկուսի վարչութեան հետ: Շուէտի մէջ Հ.Մ.Ը.Մ. կը գործէ երեք ակումբներու մէջ՝ Վեսթերոս, Սոտեթերիա եւ Սթոքհոլմ:

Վեսթերոսի մէջ Հ.Մ.Ը.Մ. ունի երկու խմբապետ եւ 15 գայլիկ: Կը գործեն Փուլթայի երկու խումբեր, քոնկ Փուլի խումբ մը եւ 37 հոգինոց երիտասարդներու խումբ մը: Միաւորին ընդհանուր թիւն է 183:

Սոտեթերիան ունի 132 անդամ: Կը գործէ եռանդամ ընկաւուտ՝ Խորհուրդ մը: Կան 45 տարազաւորներ եւ Փուլթայի երկու խումբեր: Ունին նաեւ յանձնախումբ մը:

Սթոքհոլմի մէջ կան 200 Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնցմէ 50-ը գործօն են: Այժմ աշխատանք կը տարուի շրջանին մէջ սկաուտական կորիզ մը ստեղծելու:

Նշենք, որ Ուփսալայի մէջ եւս կազմուած է Հ.Մ.Ը.Մ.ական խումբ մը, որ յառաջիկային կրնայ առանձին միաւորի վերածուիլ: Մոթալայի մէջ եւս խմբուած են 50 սուրիահայեր, որոնք տրամադրութիւն ունին Հ.Մ.Ը.Մ.ին միաւորի:

Եղբ. Մկրտիչեան 9 Մարտին ներկայ գտնուեցաւ Շուէտի մեկուսի մասնաճիւղի ընդհանուր ժողովին, որ տեղի ունեցաւ Վեսթերոսի ակումբին մէջ, 94 անգամներու ներկայութեամբ:

Ժողովին բացումը կատարեց ընթացաւարտ վարչութեան ատենապետ եղբ. Վարուժան Բէհէեան: Բացման

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՄԸ ՇՈՒԷՏ, ՀՈԼԱՆՏԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

աղօթքը կատարեց Շուէտի Առաջնորդ Եղիշէ Վրդ. Աւետիսեան: Ժողովի աւարտին ընտրուեցաւ 11 հոգինոց նոր վարչութիւն, բաղկացած երեք ակումբներու (Վեսթերոս, Սոտեթերիա, Սթոքհոլմ) ներկայացուցիչներէ: Նորընտիր վարչութեան մաս կազմեցին քոյրեր Արփինէ Մարտիրոսեան, Նաթալի Արզումանեան, եղբայրներ Ֆէտի Թաթրա, Եղիա Յակոբեան, Յովիկ Զուլհանեան, Հայրենիք Յովսէփեան, Պօղոս Պետրոսեան, Համօ Երէցեան, Ալեքս Շառոյեան, Տիգրան Կէօվչէնեան եւ Գէորգ Ազէյեան: Իրանը կազմեցին եղբ. Ֆէտի Թաթրա ատենապետ, քոյր Արփինէ Մարտիրոսեան ատենադպիր եւ եղբ. Յովիկ Զուլհանեան զանձապահ:


Ընդհանուր ժողովին յաջորդող օրը, Կեդրոնական Վարչութեան ատենապետը այցելեց Սոտեթերիա եւ Սթոքհոլմ քաղաքները, ուր հանդիպումներ ունեցաւ Շուէտի հայոց առաջնորդին եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արտակ Արեգոնեանի հետ:

ՀՈԼԱՆՏԱՅԻ ՄԵՉ

Շուէտէն ետք, եղբ. Մկրտիչեան այցելեց Հոլանտա: 14 Մարտին, Ալմելոյի մէջ ան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի նորընտիր վարչութեան հետ, որ հազիւ շաբաթ մը առաջ ընտրուած էր հետեւեալ կազմով՝ Եղբայր Ազատ Պօղոսեան (ատենապետ), քոյր Յասմիկ Օհանեան (ատենադպիր), եղբայրներ Սիփան Խաչատուրեան (զանձապահ), Օհաննէս Օհաննէսեան, Անդրանիկ Արամեան, Բաֆֆի Ամիրխանեան եւ Ռուբէն Յակոբեան (խորհրդակալներ):

Ալմելոյն բաւական աշխոյժ գաղութ մըն է, բաղկացած իրաքահայերէ եւ սուրիահայերէ: 1996-ին հիմնուած այս մասնաճիւղը ունի 160





Ալմելօ



Փարիզ



Շուևտի մէջ
Յ. Յանրապետութեան
ղեսպան Արտակ
Արիդոնեանի մօտ:

անդամներ, 80-ր տարազաւորներ: Կր գործեն Ֆուլթայոյի երկու խումբեր: Սկաուտական հաւաքները կը կատարուին 15 օրը անգամ մը: Ունին ակումբի հարց: Վերջերս, սակայն, պետութիւնը մասնաճիւղին անվճար կերպով տրամադրած է հողաչերտ մը, սրուն վրայ կը ծրագրուի կառուցել հայ կեդրոն մը:

Եղբ. Մկրտիչեանի ի պատիւ Ալմելոյի մէջ կազմակերպուեցաւ ժողովրդային հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցան գաղութին բոլոր միութիւնները՝ Բարեգործականը, Հ.Յ.Դ.Ն եւ ուրիշներ:

Յաջորդ օր, եղբայր Մկրտիչեան այցելեց Ալմելոյէն 250 քմ. հեռու գտնուող Ալկմար քաղաքը եւ ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին հիմնադրութեան (տեսնել Բ. կողքը):

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

Եղբ. Մկրտիչեանի կազմակերպական առաքելութիւնը ընդգրկեց նաեւ Ֆրանսան՝ երկու հանգրուանով: Առաջինը, 12-13 Մարտին, Շուևտէն Հոլանտա մեկնումի ճամբուն վրայ, եղբայրը երկու օրով գտնուեցաւ Փարիզ եւ հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսի վարչութեան հետ: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Հրաչ Միսեռեանի ընկերակցութեամբ, ան այցելեց նաեւ 2013 ի ամբօրան, մասնաճիւղի բանակումին ղեկաւոր արկածի ենթարկուած քոյր Ռիթա Միմոնեանին եւ բարի ապաքինում մաղթեց անոր:

Ֆրանսա երկրորդ այցելութիւնը երկարեցաւ 17-22 Մարտ եւ ընդգրկեց Վալանս եւ Մարսէյ քաղաքները, ուր կր գործեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր:

Վալանսի մէջ, եղբայրներ Մկրտիչեան եւ Միսեռեան հանդիպում մը ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին հետ, շուրջ 70 հոգիի

ներկայութեամբ: Եղբայրները այս առիթով զեկուցեցին Հ.Մ.Ը.Մ.ի մեծ յնտանիքին կառարած աշխատանքներուն եւ ապագայի ծրագրերուն մասին: Անդամական հանդիպումին յաջորդեց առանձին հանդիպում մը մասնաճիւղին իննանդամ վարչութեան հետ: Մասնաճիւղը Ֆուլթայոյի կողքին այժմ գարկ տուած է նաեւ սկաուտական շարժումին, պատասխանատու ունենալով սուրիահայ եղբ. Կարօ Ստեփանեանը:

Վալանսէն ետք, Կեդրոնական վարչութեան եղբայրները այցելեցին Մարսէյ եւ հանդիպում մը ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն վարչութեան հետ: Մարսէյի մասնաճիւղը ունի 370 անդամներ, որոնք մեծամասնութեամբ Ֆուլթայոյիսաններ են եւ ունին հայախօսութեան ղեկաւորութիւն:

Մարսէյի մէջ, եղբայրները այցելեցին նաեւ Համագայինի Ճեմարան եւ ծանօթացան Ճեմարանի նորակառոյց մարզասրահին:



Վալանս

The Champs-Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



24 Փետրուարին նոր էջ մը բացուեցաւ հայկական մարզաշխարհի պատմութեան մէջ, համահայկական ձմեռնային առաջին խաղերու բացումով: Հայաստան հիւրընկալեց 12 երկիրներու 22 քաղաքներէ ժամանած աւելի քան 400 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք առաջին անգամ ըլլալով հայրենիքի մէջ հանդէս եկան ձմեռնային մարզախաղերով, յաղթեցին-պարտուեցան եւ, բոլոր պարագաներու, գոհունակ վերադարձան իրենց տուները՝ եօթը օր ապրելէ ետք ազգային-մարզական միասնականութեան ոգեւորիչ մթնոլորտի մէջ:

Մասնակիցներէն շատերը առաջին անգամ ըլլալով ծանօթացան իրենց հայրենիքին, մինչ ուրիշներ համահայկական ծանօթութիւններով հարստացուցին իրենց կեանքը՝ Հայաստան-Սփիւռք գործակցութեան նոր կամուրջներ նետելով իրարու:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՅՈՒՄԸ

Համահայկական ձմեռնային առաջին խաղերուն հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ 24 Փետրուարին, Ծաղկաձոր քաղաքի ճոպանուղիին յարակից տարածքին մէջ, ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի, Հայաստանի Ազգային Ողիմպիական կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանի, Հայաստանի մարմնամարզի



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՇԽՈՒԺԱՅՄԱՆ ՆՈՐ ԽԹԱՆ

եւ երիտասարդութեան հարցերու նախարար Եւրի Վարդանեանի, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի, Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի, համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանի, փոխ նախագահ եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեանի, համահայկական ձմեռնային առաջին խաղերու կազմակերպիչ կոմիտէի անդամներու եւ այլ հիւրերու:

Խաղերու բացման խօսքը արտասանեց եւ ներկաները ողջունեց համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեան: Ան ըսաւ, որ ուրախութեամբ զարմացած է համահայկական ձմեռնային առաջին խաղերու մասնակիցներու թիւէն: «Հաճելիօրէն զարմացած ենք առաջին խաղերու մասնակիցներու քանակէն, 12 պետութիւններու 22 քաղաքներէ: Այս անակնկալ էր նաեւ մեզի համար, որովհետեւ Հայաստանը եւ, կը կարծեմ, նաեւ Սփիւռքը, այդքան լաւ աւանդութիւններ չունին ձմեռնային մարզախաղերու մէջ: Բայց եթէ ձմեռնային խաղերն ալ զարգանան ամառնային խաղերու տրամաբանութեամբ, ապա յաջորդ խաղերու մասնակիցներուն թիւը կ'անցնի հազարի սահմանը»:

Զաքարեան յայտնեց նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահին առաջարկով, խաղերու կազմակերպիչ կոմիտէն առաջին անգամ ըլլալով կը հոգայ մասնակից

ներուն բոլոր ծախսերը՝ բացառութեամբ ճանապարհածախսերը:

Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ նախագահ Սերժ Սարգսեան: «Սիրելի հայրենակիցներ, ես ջերմութեամբ կ'ողջունեմ համահայկական ձմեռնային առաջին խաղերու մասնակիցներն ու հիւրերը: Իր 15-ամեայ պատմութեան ընթացքին, ընդլայնելով աշխարհագրութիւնը եւ աւելցնելով մասնակիցներու թիւը, համահայկական խաղերը մեզի կը յուշեն մէկ բան, թէ այս խաղերը պահանջուած են: Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք նախաձեռնեցին եւ այս 15 տարիներու ընթացքին ջանք եւ եռանք չինայեցին, որպէսզի խաղերը կատարուին: Այսօր վստահութեամբ կրնանք փաստել, որ համահայկական խաղերը կայացած են: Համահայկական խաղերը մեզի համար կարեւոր նշանակութիւն ունին: Ակնյայտ է, որ այս խաղերը կ'ամրապնդեն Հայրենիք-Սփիւռք կապը: Այս խաղերը հնարաւորութիւն կու տան հազարաւոր հայ երիտասարդներու, առողջ ապրելակերպ դաւանող մարդոց ծանօթութիւններ հաստատել, իսկ ժամանակակից աշխարհին մէջ այս հանգամանքը շատ կարեւոր է: Ես յաջողութիւն կը մաղթեմ համահայկական ձմեռնային առաջին խաղերու մասնակիցներուն, կը ցանկամ արդար մրցակցութիւն, սուր պայքար եւ մարզական յաջողութիւն»:

Համահայկական ձմեռնային առաջին խաղերու ջանք վառեց Պարսեղունայի ողիմպիական խաղերու (1992) ախոյեան

Իսրայել Մեյլտոսեան: Համահայկական խաղերու մարզիկի երգումը կարգաք Սոչիի ողիմպիական խաղերու (2014) մասնակից Նովատոյէն Արման Սերեբրակեան:

ԽԱՂԵՐՆ ՈՒ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

Համահայկական ձմեռնային առաջին խաղերուն մասնակից պատուիրակութիւնները ներկայացուցին հետեւեալ քաղաքները:

● **Հայաստան-Արցախ** - Երեւան, Կիւմրի, Ծաղկաձոր, Հրազդան, Ջերմուկ, Վանաձոր, Վարդենիս, Քաջարան, ԼՂՀ:

● **Վիւնաք** - Նովատո-Քալիֆորնիա-Թեքսաս (Մ. Նահանգներ), Վիեննա (Աւստրիա), Պուլէնոս Այրէս (Արժանթին), Թեհրան (Իրան), Պէյրութ (Լիբանան), Նիկոսիա (Կիպրոս), Մոսկուա (Ռուսիա), Ախալքալաք (Վրաստան), Թիֆլիս (Վրաստան), Նինոծմինդա (Վրաստան), Փարիզ-Մարսէյ (Ֆրանսա):

Խաղերը ընդգրկեցին չորս մարզաձեւեր՝ դահուկավազք, լեռնադահուկ, սնոպորտ եւ տափօղակով հոքի: Դահուկային մարզախաղերը կատարուեցան Ծաղկաձորի, իսկ հոքին Երեւանի Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ: Հոքիի մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին Երեւանի, Մոսկուայի եւ Մոնթրէլի խումբերը: Մոսկուա տիրացաւ առաջնութեան, Երեւան՝ երկրորդութեան, իսկ Մոնթրէլը՝ երրորդութեան: Մոսկուա 11-4 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցները:

Ընդհանուր արդիւնքները եղան ի նպաստ Երեւանի, Թիֆլիսի եւ Կիւմրիի խումբերուն, որոնք տիրացան առաւելագոյն թիւով մետալներու - Երեւան՝ 12 մետալ (4 ոսկի, 5 արծաթ, 3 պրոնզ), Թիֆլիս՝ 4 (4 ոսկի), Կիւմրի՝ 6 (2 ոսկի, 4 պրոնզ): Մետալներու արժանացան նաեւ Ծաղկաձոր, Հրազդան, Մոսկուա, Նովատո, Նիկոսիա, Վանաձոր եւ Մոնթրէլը (մրցումներու արդիւնքներուն ընդհանուր դասաւորումը տեսնել առանձին):

Մրցումներու արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը:

ՏԱԹՕՂԱԿՈՎ ՀՈՔԻ

- 1. Մոսկուա
- 2. Երեւան
- 3. Մոնթրէլ

ՍՆՈՊՈՐՏ

ՈՒՈՐԱՎԱՅՐԷՋՔ/ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Լուսինէ Յարութիւնեան (Երեւան)
- 2. Մարիանա Թովմասեան (Երեւան)
- 3. Լուսինէ Պէրպէրեան (Երեւան)

ՏՂԱՔ

- 1. Հայկ Հայրապետեան (Ծաղկաձոր)
- 2. Կարէն Միրզոյեան (Ծաղկաձոր)
- 3. Մոնթէ Յարութիւնեան (Հրազդան)

ՀՍԿԱՅ ՈՒՈՐԱՎԱՅՐԷՋՔ/ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Լուսինէ Յարութիւնեան (Երեւան)
- 2. Անի Ստեփանեան (Երեւան)
- 3. Մարիանա Թովմասեան (Երեւան)

ՏՂԱՔ

- 1. Թեոս Թորոսեան (Հրազդան)
- 2. Հայկ Հայրապետեան (Ծաղկաձոր)
- 3. Մոնթէ Յարութիւնեան (Հրազդան)

ԼԵՈՆԱԴԱՅՈՅ

ՈՒՈՐԱՎԱՅՐԷՋՔ/ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Թամար Պէրպէրեան (Թիֆլիս)
- 2. Եւա Պապոյեան (Ծաղկաձոր)
- 3. Տաթևիկ Մուրատեան (Երեւան)

ՀՍԿԱՅ ՈՒՈՐԱՎԱՅՐԷՋՔ/ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Թամար Պէրպէրեան (Թիֆլիս)
- 2. Եւա Պապոյեան (Ծաղկաձոր)
- 3. Սիրանոյշ Մաղաբեան (Վանաձոր)

ԴԱՅՈՒԿԱՎԱՉՔ

Յ.ԴԵ ՔԼՄ ԴԱՍԱԿԱՆ ՈՃ/ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Աննա Միխիթարեան (Կիւմրի)
- 2. Սիւզաննա Վարդսեան (Հրազդան)



3. Գաթիա Գալստեան (Կիւմրի)

5 ՔԼՄ ԴԱՍԱԿԱՆ ՈՃ/ՏՂԱՔ

- 1. Սերգէյ Միքայէլեան (Երեւան)
- 2. Արթուր Եղոյեան (Երեւան)
- 3. Գորիկ Գէորգեան (Կիւմրի)

Յ.ԴԵ ՔԼՄ ԱՉԱՏ ՈՃ/ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Գաթիա Գալստեան (Կիւմրի)
- 2. Սիւզաննա Վարդսեան (Հրազդան)
- 3. Լիլիթ Տոնոյեան (Կիւմրի)

5 ՔԼՄ ԱՉԱՏ ՈՃ/ՏՂԱՔ

- 1. Սերգէյ Միքայէլեան (Երեւան)
- 2. Արթուր Եղոյեան (Երեւան)
- 3. Գորիկ Գէորգեան (Կիւմրի)

ԾԻԾԵՌՆԱԿԱՐԵՐԳ ԵՒ ԷՋՄԱԾԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

28 Փետրուարը հանգիստի օր մը եղաւ ձմեռնային խաղերու մասնակիցներուն համար: Այդ օր, խաղերու պատասխանատուներուն ընկերակցութեամբ, բոլոր պատուիրակութիւնները այցելեցին Ծիծեռնակաբերդ եւ էջմիածին:

Հայկական Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն իրենց յարգանքի տուրքը ընծայելէ ետք, էջմիածինի մէջ, մարզական պատուիրակութիւնները այցելեցին թանգարան եւ լսեցին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին պատգամը: Գարեգին Բ. նշեց, որ «Մեծ ուրախութիւն է տես-



նել, որ երկրի իշխանութիւնները զանազան ծրագիրներու միջոցով աշխարհի չորս ծագերու հայերը կը համախմբեն հայրենիքի մէջ: Նման նպատակ ունի նաեւ համահայկական խաղերու կազմակերպումը: Մարզական այս խաղերը կը նպաստեն ինչպէս մարմնի ֆիզիքական, այնպէս ալ հոգեւոր զարգացման: Կը մաղթենք, որ մարզական ջանքերը բարի արդիւնքներ կ'ունենան եւ յաղթանակներ կը բերեն բոլորին»:

ՓՎԿՈՒՄԸ

Հնգօրեայ մրցակցութեան աւարտին, 39 մետալակիրներու եւ բաժակակիրի մը ինքնութեան ճշդումէն ետք, համա-

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՉՄԵՌԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ			
ԶԱՂԱՔ	ՈՍԿԻ	ԱՐԾԱԹ	ՊՐՈՆԶ
1. Երեւան	4	5	3
2. Թիֆլիս	4	-	-
3. Կիւմրի	2	-	4
4. Ծաղկաձոր	1	4	1
5. Հրազդան	1	2	2
6. Մոսկուա	1	-	-
7. Նովատո	-	2	-
8. Նիկոսիա	-	-	1
9. Վանաձոր	-	-	1
10. Մոնթրէլ	-	-	1

հայկական ձմեռնային առաջ խաղերուն փակումը տեղի ունեցաւ 3 Մարտին, Ծաղկաձորի Կեչառիս վանական համալիրի բակին մէջ: Փակման հանդիսութեան ներկայ գտնուեցան համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեան, Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան, Հայաստանի արտակարգ իրավիճակներու նախարար Արմէն Երէցեան, Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեան եւ բարձրաստիճան անձնաւորութիւններ ու մարզասէրներ:

Իշխան Զաքարեան ներկաները ողջունելով նշեց, որ «Ճիշդ 15 տարի առաջ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երեւանի մէջ կազմակերպուեցան համահայկական առաջին խաղերը, որոնք իսկական կամուրջ մը եղան Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման: Տարուէ տարի աւելցաւ խաղերու մասնակիցներուն թիւը՝ հասնելով 3244 հոգիի, իսկ աշխարհագրական առումով 62 քաղաքները դարձան 128: Երկրորդ խաղերու օրերուն Հայաստան ժամանած մեր հայրենակից երիտասարդներուն մօտ 90 առ հարիւրը առաջին անգամ ըլլալով մայր հայրենիք կը գտնուէր»:

Ապա, յաղթողներուն մետալները յանձնեց Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան: Իր կարգին, Աբրահամեան շեշտեց համահայկական խաղերու կազմակերպման կարեւորութիւնը եւ նշեց, որ մարզական այս մեծ նախաձեռնութիւնը աշխարհի տարբեր անկիւններ գտնուող հայերը

կը միացնէ՝ ամրապնդելով Հայաստան, Արցախ, Սփիւռք միասնականութիւնը:

Իշխան Զաքարեան համահայկական ձմեռնային խաղերու փակման պաշտօնական արարողութեան աւարտին՝ համահայկական խաղերու դրօշը յանձնեց Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանին եւ նշեց, որ այս քայլը խորհրդանշական է, որովհետեւ յառաջիկայ տարի նախատեսուած համահայկական վեցերորդ խաղերու հիւրընկալ քաղաքը պիտի ըլլայ Երեւանը:

Մարգարեան եւս խօսք առնելով ողջունեց եւ շնորհաւորեց համահայկական ձմեռնային առաջին խաղերու մասնակիցները եւ նշեց, որ 2015-ին մայրաքաղաք Երեւանը ի սրտէ կը հիւրընկալէ համահայկական ամառնային Ե-րդ խաղերու մասնակիցները: «Համահայկական խաղերու իրականացումը իսկապէս լուրջ խթան է ինչպէս Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման, այնպէս ալ մարզամշակութային կեանքի աշխուժացման», ընդգծեց Տարօն Մարգարեան:

Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան շնորհակալութիւն յայտնեց համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանին, համահայկական խաղերու կազմակերպիչ կոմիտէին, բոլոր մասնակիցներուն եւ կազմակերպիչներուն: Ապա, ան փակուած յայտարարեց համահայկական ձմեռնային առաջին խաղերը:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com


H. N. BOYADJIAN & CO.

ՄՈՆՏԻԱԼԻ ԱՌԵՂԾՈՒՄԾԱՅԻՆ 26 ԵՒ 27 ԹԻՒԵՐԸ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Իւրաքանչիւր մոնտիալի նախօրեակին Ֆուլթպոլասէր աշխարհը կը սկսի եռալ այն հարցումով, թէ ո՞վ պիտի շահի այս տարուան մոնտիալը: Կը սկսին վերլուծումներ, խաղերու արդիւնքներու գնահատումներ, խաղացողներու մակարդակի քննարկումներ, վիճակագրական տուեալներու հետեւութիւններ եւ այլն, եւ այլն: Բնականաբար, ասոնց մէջ դեր ունին թէ՛ լրագրողները, թէ՛ պատկերասփիւռի մարզական լրագրողները, թէ՛ Ֆուլթպոլի մասնագէտ վերլուծաբանները եւ թէ՛ մանաւանդ՝ գրաւի գրասենակները:

Այս մոնտիալին եւս կան թեկնածու կարգ մը խումբեր, որոնք արդարօրէն պիտի պայքարին խլելու բաժակը: Բնականաբար, այս մարզական պայքարին մէջ առաջին դերակատարները Ֆուլթպոլիստները իրենք են: Ամէն ինչ կախեալ է անոնց խաղէն, խաղաոճէն, մակարդակէն եւ պատրաստակամութենէն: Անոնք կը պայքարին, որպէսզի իրենց երկիրը արձանագրէ լաւագոյն արդիւնքներ եւ իրենք եւս գրաւեն լուսարձակներ եւ արժեւորուին ըստ այնմ:



Ս ա կ ա յ ն , մոնտիալներու պատմութիւնը ցոյց տուած է, որ բոլոր արժանի Ֆուլթպոլիստները չէ որ յաջողած են տիրանալ տիտղոսին. Փուշքաշ, Էօզեպիօ,

Քրուլֆ, Փլաթինի, Պաճիօ Նոյնքան արժանի եղած են տիրանալու տիտղոսին՝ որքան իրենց տիտղոսակիր մրցակիցները:

Վիճակագրական տուեալները կը խօսին հետաքրքրական թիւերու մասին: Եթէ նկատի առնենք մոնտիալներու պատմութիւնը, պիտի նկատենք թիւերու ապշեցուցիչ իրականութիւն մը, որ թերհաւատներու համար նկատուի սնոտիապաշտութիւն կամ նախապաշարում, իսկ շատեր ալ կրնան պահ մը մտածել այդ մասին: Բայց փաստը կը մնայ փաստ, թէ կողմ թէ այդ թիւերը պարզ գուգադիպութիւն ըլլան:

1982-ին, երբ Փառլօ Ռոսսի մոնտիալի երկրորդ հանգրուանին իր զարթօնքը կ'ապրէր եւ կը դառնար մոնտիալի կոլսքորը, լաւագոյն խաղացողը եւ կը տիրանար մոնտիալի բաժակին, միայն 26 տարեկան էր:

1986-ին, երբ Մարատոնա հրաչքներ կը գործէր եւ կը տիրանար մոնտիալին, 26 տարեկան էր: Նախքան մոնտիալը, արժանի ինի կազմը չէր նկատուեր տիտղոսին գլխաւոր թեկնածուներէն մէկը: Նոյն մոնտիալի կոլսքորը՝ անգլիացի Կէրի Լինեքըրը եւս 26 տարեկան էր:



2002-ին, Ռոնալտո արդարօրէն կը տիրանար մոնտիալին եւ կը դառնար մոնտիալի կոլ-սքորըրը, Պրազիլի պարգեւելով իր հինգերորդ տիտղոսը: Ան 26 տարեկան էր:

Նոյն զուգադիպութեամբ, Ֆուլթոլի հրահաններ՝ Փուշքաշ, Բրուչֆ, Փլաթինի եւ Պաճիօ իրենց փառքի օրերուն չեն յաջողած մոնտիալի բաժակին տիրանալ, երբ... 27 տարեկան եղած են:

1990-ին, Գերմանիա երրորդ անգամ ըլլալով կը տիրանար մոնտիալին: Անոր երիտասարդ աստղը՝ Եուրկըն Բլինսմըն միայն 26 տարեկան էր: Իսկ իտալացի Սքիլաչի, որ մոնտիալի սկիզբը պահեստի մարզիկ էր, դաշտ ներկայնալով կը դառնար 1990-ի մոնտիալի կոլ-սքորըրը: Ան 26 տարեկան էր:

1998-ին, երբ Ֆրանսա առաջին անգամ ըլլալով կը խլէր մոնտիալի բաժակը, անոր «մախաթը»ն եւ Ֆրանսայի բոլոր ժամանակներու լաւագոյն Ֆուլթոլիստներէն Զիննէտին Զիտան 26 տարեկան էր:

Արդեօք այս բոլորը զուգադիպութի՞ւն են: Թերեւս: Թիւերու լեզուն ինքզինք պարտադրած է մոնտիալներու պատմութեան ընթացքին: Այս իրականութենէն մեկնելով մասնագէտներ կը յիշեցնեն, թէ Լիոնէլ Մեսսի այս տարի 26 տարեկան է: Արժանթին 1986-ի նման հիմնական թեկնածու չէ: Արդեօք Մեսսի պիտի յաջողի՞ Արժանթինը առաջնորդել իր երրորդ տիտղոսին եւ նկատուիլ Մարատոնայի արժանի յաջորդը:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ՆՈՐԱԿԱԶՄ ՍԿՈՒՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԵՐԴՈՒՄԸ

3.9. ՆԻԿՈՍԻԱ

21

Ապրիլի երեկոյան ժամը 6-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Նիկոսիոյ ակումբին մէջ տեղի ունեցաւ խմբապետ սկաուտներու երդման արարողութիւնը, Կիպրոսի Առաջնորդական փոխանորդ Վարուժան Արք.

Հերկելեանի, պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, Հ.Յ.Դ. Կիպրոսի կոմիտէի, ակումբի եւ քոյր միութիւններու վարչութիւններու ներկայութեան: Ներկայ էին նաեւ թեմական եւ վարչական ժողովներու ատենապետները, Նարեկ վարժարաններու հոգաբարձութեան ատենապետը եւ տնօրէնուհին:

Առաջին վարկեանէն զգալի էր ակումբի բակին մէջ ներկաներուն մօտ տիրող խանդավառութիւնը, ուր Եռագոյն դրօշին, միութեան վահանակին եւ սկաուտական շուշանածաղիկին ստեղծած վսեմութիւնը անգամ մը եւս վերածուեցան կնքող արժէքներու, վերականգնող եւ յաղթանակող խորհրդանիշներու:

Բացման խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի մեկուսի վարչութեան ատե-

նապետ եղբ. Յակոբ Գազանճեան՝ բացատրելով սկաուտական շարժման նշանակութիւնը եւ անոր նպատակը:

Յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական դրօշի օրհնութիւնը Սրբազան Հօր կողմէ, որմէ ետք, ակումբի 80-ամեայ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, երկինք բարձրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական դրօշակը:

Հասած էր օրուան արարողութեան գլխաւոր դերակատարներու պահը. քոյր Ճինա Խաչատուրեան, եղբայրներ Արմէն Այվազեան եւ Յակոբ Աթաշեան մօտեցան Հ.Մ.Ը.Մ.ի





սկաուտական դրոշին: Եղբ. Յարութիւն Անմահունի իր հանդիսաւոր ելոյթով կարդաց երգումը, որ կրկնուեցաւ երեքին կողմէ: Յուզիչ պահ մը եղաւ, գոյամարտի նոր խարխախ մը նետուեցաւ, նուիրական նոր էջ մը բացուեցաւ, յուսահատութիւնը պարտուեցաւ եւ յարատեւութիւնը յաղթանակեց, խոչընդոտները ոտնակոխ եղան ու յառաջ նետուեցաւ պատասխանատուութեան գիտակցութիւնը:

Յաղթանակող այս արարողութեան յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան ուղերձը, որ ընթերցուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի մեկուսի վարչութեան ատենապետին կողմէ:

Ներկաններու կողմէ բարձր գնահատուող այս նախաձեռնութիւնը վերջ գտաւ Հնորճաւորական խօսքերով եւ յաջողութեան մաղթանքներով:

Յաջորդեց վարչութեան կազմակերպած հիւրասիրութիւնը, ջերմ մթնոլորտի մը մէջ:

«ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՆՇՈՒՄ ԱՄԵԼՈՅԻ ՄԷՋ

23 Փետրուարին, Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղը «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ յատուկ ձեռնարկով մը նշեց Վարդանանց տօնը: Նոյն առիթով մասնաճիւղը յարգանքի իր տուրքը մատուցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նորոգ հանգուցեալ անդամ եղբայր Միհրան Շիմչիրեանի:





Հ.Մ.Ը.Մ.- ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆՌԷՍԸ

Սեւան Նազարեան ՓԱՐԻԶ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տարեկան պարահանդեսը տեղի ունեցաւ Շաբաթ, 11 Յունուար 2014-ի երեկոյեան, Փարիզի «Մարիոթ» սրահին մէջ:

Փարիզահայու թիւերը վարժուած է այլեւս եւ անհամբեր կը սպասէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի այս ձեռնարկը, որովհետեւ գիտէ, թէ այդ պահերը հաճելի են ու մտերմիկ, ներկայացուած յայտագիրը ամիսներ առաջ ուսումնասիրուած եւ սերտուած է, նպատակ ունենալով գոհացնել բոլոր մասնակիցները:

330 հոգի, որոնց էջ անպայմանօրէն բարեկամներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ, միութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներ հոն էին:

Սրահ մուտքին, փոքր պաստառներու վրայ տեղադրուած էին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզերու՝ Ֆուլթպոլի, պասքէթի եւ սկաուտութեան աշխատանքներէն նկարներ:

Քոթթէյլի սրահէն ներս մտերմիկ մթնոլորտէն ետք ներկաները առաջնորդուեցան ճաշասրահ, ուր դիմաւորուեցան, գրաւելով իրենց յատկացուած տեղերը:

Բարի գալուստի խօսքով ելոյթ ունեցաւ վարչութեան ատենապետ եղբ. Անտրէ Տատայեան, որ հակիրճ կէտերու մէջ ներկայացուց մասնաճիւղին այս տարուան իրագործումներն ու ծրագիրները:

Ան յիշեց սուրիահայութեան դիմագրաւած դժուարութիւններն ու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կացութիւնը, որոնց յայտնեց իր գորակցութիւնը:

Այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Հրաչ Սիսեռեան: Եղբայրը շեշտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.ի ներդրումին՝ հայապահպանման գործին մէջ, երիտասարդութեան մօտ վառ պահելով ազգային գիտակցութիւնը:

Օրուան մեծագոյն անակնկալն էր Լիբանանի նախկին վարչապետ Սաատ Հարիրիի ներկայութիւնը, թէեւ կարճ պահով մը: Պատուոյ հիւրը ներկայացուց իր բարեմաղթութիւնները եւ իր սրտի խօսքը ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ին: Նշենք, թէ Հարիրի տարիներէ ի վեր իր նիւթական աջակցութիւնը կը բերէ մասնաճիւղին:

Երեկոյին ընթացքին ցուցադրուեցաւ տասը վայրկեանոց ժապաւէն մը, որ կ'ընդգրկէր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզերուն նուիրուած պատկերներ՝ Ֆուլթպոլ, պասքէթ, սկաուտու-



թիւն, բայց նաեւ՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղէն պատուիկներ, որուն առաջնութիւնը գրաւած էր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Ֆուլթպոլի խումբը:

Այնուհետեւ բեմը յանձնուեցաւ երեկոն խանդավառելու համար հրաւիրուած «Կոմիտաս» նուագախումբին եւ երգիչ՝ Յովսէփի, որոնք մինչեւ ուշ ժամեր մնացին հարթակի վրայ ու հայկական երգերով եւ պարեղանակներով ճոխացուցին մթնոլորտը:

Վիճակահանութիւն, անակնկալներ, երգ ու նուագ երեկոյին տուին իր գրաւչութիւնը ու ներկաները սրահէն հեռացան բարձր տրամադրութեամբ:

«ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖՈՆՏ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ	
● Եղբ. Անդրանիկ Պահարեան (Փարիզ)	200 \$
● Տէր եւ տիկ. Սեւան Ալեքսանտրեան	100 \$
● Տէր եւ տիկ. Սեդրակ Էմիօղլեան եւ զաւակունք	100 \$
● Տէր եւ տիկ. Նուպար եւ Մարօ Պաղպուտարեան	100 \$
● Տէր եւ տիկ. Նազարէթ Պապուրեան եւ զաւակունք	50.000 Լ.Ո.



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Թղթակից
ՀԱԼԷՊ

Հակառակ Սուրիան եւ յատկապէս Հալէպ քաղաքը ռազմադաշտի վերածած ծանր կացութեան, Կիրակի, 23 Փետրուարի յետմիջօրէին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ ընտանիքը Սուլէյմանիէի «Գէորգ Եսայեան» սրահին մէջ մեծաշուք հանդիսութեամբ մը նշեց միութեան 95-ամեակը:

Հանդիսութիւնը կատարուեցաւ հովանաւորութեամբ Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, նախագահութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութիւններուն:

Իրենց ներկայութեամբ հանդիսութիւնը պատուեցին երեք համայնքապետերը՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, Հայ Կաթողիկէ Առաջնորդ Պետրոս Արք.



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան:

Միրիաթեան եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ համայնքապետ վեր. Յարութիւն Սելիմեան, Հայաստանի Հանրապետութեան Հալէպի գլխաւոր հիւպատոս Կարէն Գրիգորեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Բերիոյ Թեմի ներկայացուցիչը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընկերուհին, Բերիոյ Թեմի Ազգային Գաւառական Ժողովի երեսփոխաններ, Ազգային վարչութեան անդամներ, հալէպահայ կազմակերպութիւններու, մշակութային, բարեսիրական, մարզական եւ հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներ եւ հոգեւոր հայրեր:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներուն կատարումով: Ապա, ներկաները հրաւիրուեցան վայրկեան մը յոտնկայս լուծեամբ յարգելու յիշատակը Հ.Մ.Ը.Մ.ի ննջեալներուն եւ նահատակներուն, 16 Փետրուար 2014-ին, Պէյրութի մէջ անակնկալօրէն մահացած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գանձապահ եղբ. Միհրան Շիմշիրեանին, ինչպէս նաեւ վերջին տարիներուն Սուրիոյ մէջ ինկած հայ թէ տեղացի նահատակներուն:



Երբ բեմին վարագոյրը բացուեցաւ հանդիսատեսին դիմաց կոկիկ եւ գեղեցիկ զարդարանքով տեսարան մը պարզուեցաւ: Առաջին հերթին, պաստառի մը վրայ ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ամփոփ պատմականը: Մինչ բեմին վրայ գտնուող խումբ մը մը քոյր-եղբայրներ գեղարուեստական յայտագիրով յատուկ երանգ մը տուին հանդիսութեան: Անոնք ներկայացան անհատական եւ խմբային ասմունքով, իսկ ուրիշներ՝ երգերով, միատեղ ամբողջական ներդաշնակութեամբ եւ ներկայա-

ցումով, մինչ պաստառի վրայ կը ներկայացուէր Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ գործունէութիւնը:

«Մեր սրտերու Հ.Մ.Լ.Մ.» խորագիրը կրող քերթուածին հեղինակն էր հալէպահայ բանաստեղծ եղբ. Յակոբ Տլտրլեան: Եղբ. Եղիա Քիլէճեան մենեղեց «Հ.Մ.Լ.Մ. մեծ դպրոց» երգը: Տեղի ունեցաւ զուգերգ՝ «Անցեալէ ապագայ, Հ.Մ.Լ.Մ.ը ներկայ», զոր մեկնաբանեցին եղբ. Սուրէն Աճէմեան եւ քոյր Նորա Սիմոնեան: Գեղարուեստական գեղեցիկ ներկայացման եւ պատրաստութեան համար շնորհակալութիւն յայտնուեցաւ ասմունքի հեղինակ եղբ. Յակոբ Տլտրլեանին, իսկ բեմադրութեան համար՝ եղբ. Նշան Օղիկեանին եւ քոյր Յուլիկ Ղազարեանին:

Տօնակատարութեան բեմավարութիւնը կատարեցին եղբ. Ծերուն Գահուէճեան եւ քոյր Լուսին Զիլաբոչեան:

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Կարպիս Թովմասեան, իսկ Սուրբիոյ Շրջանային Վարչութեան խօսքը՝ փոխ ատենապետ եղբ. Լեւոն Իսկէնտէրեան:

Արտասանուած խօսքերէն ետք, «Հայրենիքիս հետ» երգը տպաւորիչ կատարողութեամբ մենեղեց եղբ. Եղիա Քիլէճեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Ռուզան Պարսումեանի:

Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակին առիթով, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան անդամներուն կողմէ «Մառաշու-թեան» շքանշանի եւ ծառայութեան գիրերու տուչութիւն կատարուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ական հետեւեալ եղբայրներուն.- Աբրահամ Եագուպեան, Մանուկ Քէօզկէրեան, Զաւէն Էք-



մէքճեան (փոխան եղբոր շքանշանը ստանձնեց կինը), Բաֆֆի Տէր Յակոբեան, Խաթակ Տիլպէրեան, Արմէն Քէօզկէրեան, Պօղոս Պալէոզեան, Սարգիս Խուրչուտեան, Զարեհ Փամպուրեան, Շիրազ Համամճեան (յետ մահու: Շքանշանը յանձն առաւ կինը):

Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան կողմէ յատուկ յուշանուէր յանձնուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանին: Պէտք է նշել, որ այլ առիթներով յուշանուէրներ յանձնուած էին Հայ Կաթողիկէ Առաջնորդ Պետրոս Արք. Միրիաթեանին, Հայ Աւետարանական եկեղեցւոյ համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեանին եւ Հայաստանի Հանրապետութեան Հայէպի գլխաւոր հիւպատոս Կարէն Գրիգորեանին:

Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակին նուիրուած տօնակատարութեան իր սրտի խօսքը փոխանցեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան: Սրբազանը երեք յարանուանութիւններու անունով շնորհաւորեց Հ.Մ.Լ.Մ.ի 95-ամեակը եւ նշեց, որ հակառակ Սուրբիոյ ներքին պայմաններուն, տակաւին ան կը մնայ պատնէշի վրայ:

Առաջնորդը իր խօսքին մէջ ըսաւ, որ Հ.Մ.Լ.Մ.ի 95-ամեակին կ'օրհնենք հայկական ոգիով ու ձգտումներով գործող այս միութիւնը՝ մաղթելով, որ դէպի հարիւրամեակ գացող անդամ-անդամուհիները «Բարձրացիր-բարձրացուր»ի կողքին իրենց գործունէութեան նշանաբան ունենան «վերանորոգուիր եւ վերանորոգէ» գաղափարը: Ապա, ան շնորհաւորեց պարգեւատրեալ Հ.Մ.Լ.Մ.ականները:

Հ.Մ.Լ.Մ.ի 95-ամեակին նուիրուած յօբելեանական հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով ու խաղաղութեան ողջոյնով:

Հանդիսութենէն ետք, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Արամ Մանուկեան ժողովրդային Տան «Նոր Սպիտակ» ճաշասրահին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ հաւաքոյթ:



Լուսանկարները՝ «Photo VENUS»-ի

ՀՐՈՑ ԸԱՐԱԿ ԴԱՌՆԱԼԷ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԵՏՔ՝

Հ.Ա.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՊԱՐՏԷԶ-ՄԱՐԶԱՐԱՆԸ ԿՐ ՎԵՐԱԿԱՆԳՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՀԱԻԻՐՔԷՆ ԵՒ ԱՊԱՑՈՅՑԸ ԿՈՒ ՏԱՅ ԱՄԷՆ ՏԱԳՆԱՊԷ ԵՏՔ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՅՈՒ ԿԱՄՔԻՆ



Թղթակից ՀԱԼԷՊ

«Հայ Սկաուտի Օր»-ուան գործունեության ծիրին ներս, Կիրակի, 26 Փետրուարի առաւօտեան ժամը 10-ին, պատերազմի աւերէն վերականգնած ՀԱԸՄԻ Հայկպի պարտէզ-մարզարանին մէջ տեղի ունեցաւ Վկայեալ կարգի վկայականաց բաշխման եւ պէճերու տուչութեան հանդիսութիւնը, հովանաւորութեամբ ՀԱԸՄԻ Սուրիոյ Երջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հայկպի մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդին:

Ծանօթ է, որ պարտէզ-մարզարանը 21 Դեկտեմբեր 2013-ին հրոյ ճարակ դարձած էր, երբ մօտակա բնակարանի մը վրայ հրթիռ մը իյնալով հրդեհ յատջացուցած էր ՀԱԸՄԻ պատէճի եւ թենիսի դաշտերուն մէջ, պատճառելով նիւթական ծանր վնասներ (Տեսնել «Մարզիկ», թիւ 377, էջ 20-21):

Աւերն ու քանդուժ կարելի եղաւ վերականգնել շատ արագ, շնորհիւ հայ մարդու վերականգնմի կամքին եւ ՀԱԸՄ-ական գործը ամէն գնով շարունակելու անպարտե-

լի ոգիին: Ապացոյցը տրուեցաւ Վկայեալ կարգի վկայականաց բաշխումի այս հանդիսութեամբ, որ կատարուեցաւ բարոյական բարձր կորովով ու միութենական խանդավառութեամբ:

Հանդիսութիւնը սկսաւ չեփսրախումբի առաջնորդութեամբ կատարուած սկաուտական տողանցքով: Ապա, Հայկպի մասնաճիւղի խմբապետ եղբ. Տաթև Պէպէճեան հրաւիրեց Երջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանը, որ «Հայ Սկաուտի Օր»-ուան առիթով շնորհաւորեց մասնաճիւղին Սկաուտ Խորհուրդը, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը, բոլոր գայլիկներն ու սկաուտները:



Եղբայր Քէօզկէրեան Վարդանանց հերոսներու յիշատակին անդրադառնալով կոչ ուղղեց ներկաներուն, իբրեւ արժանաւոր ժառանգորդը այդ սերունդին, կառչած մնալ մեր ազգային, կրօնական եւ միութենական սկզբունքներուն եւ առաւել միասնակամութեամբ ու համերաշխութեամբ աշխատել եւ շարունակել ՀԱԸՄ-ի առաքելութիւնը:

Իր խօսքին աւարտին, եղբ. Քէօզկէրեան փոխանցեց Երջանային Սկաուտ Խորհուրդին շնորհաւորութիւնները թեկնա-

ծուներուն եւ շնորհակալութիւնները ծնողներուն, որոնք բարձր գիտակցութեամբ, ի գին ամէն զոհողութեան, իրենց զաւակները վստահեցան ՀԱԸՄ-ին, հաւատարմով հայկերտման ու հայապահպանման անոր 95-ամեայ վստակին եւ առաքելութեան:

Այս առիթով տեղի ունեցաւ Վկայեալ կարգի վկայականաց բաշխում, ՀԱԸՄ-ի Սուրիոյ Երջանային Վարչութեան եւ Երջանային Սկաուտ Խորհուրդի քոյրերուն եւ եղբայրներուն ձեռամբ, ապա Երջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան փոխանցեց Վկայեալ կարգի պէճերը: Իրենց կարգին, եղբայրներ Յովիկ Փամփալեան եւ Ծերուն Գահուէճեան ստացան զնահատական գիրքը, դասընթացքը գովելի արժեւորումով աւարտած ըլլալուն համար:

Վկայականաց բաշխման արարողութեան յաջորդեց աստիճանաւորութիւն Հայկպի մասնաճիւղի աստիճանաւորական կազմին: Ապա, ՀԱԸՄ-ի Սուրիոյ Երջանային խմբապետ եղբ. Աւօ Տէրփիլեան հրաւիրեց Վկայեալ կարգ ստացող քոյրերն ու եղբայրները վերանորոգելու իրենց երգումը եւ ստանալու խմբապետի իրենց աստիճանները:

«Հայ Սկաուտի Օր»-ուան ուրախ առիթով եւ Վարդանանց հերոսներու ոգիով առգորուած աւելի քան 400 գայլիկներ, սկաուտներ եւ երէցներ, «Լաւագոյնը», «Միշտ պատրաստ» եւ «Ծառայող» կանչերով թնդացուցին ՀԱԸՄ-ի մարզադաշտը եւ «պատուի առ»ով, «Ով հայ արի» քայլերով պաշտօնապէս փակուած յայտարարեցին հանդիսութիւնը:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻՆ



Երեքշաբթի, 11 Փետրուար 2014-ին, Հ.Մ.-Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեանի գլխավորութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ եւ Հալէպի պատասխանատու մարմինները շնորհաւորական այցելութիւն մը տուին Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանին, Արքութեան պատիւի եւ տիտղոսի արժանացման առթիւ:

Հանդիպումին ընթացքին Շահան Արք. բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ականներու աշխատանքը երկրի ներկայ պայմաններուն մէջ, շնորհաւորեց միութեան 95-ամեակը եւ մաղթեց նորանոր յաջողութիւններ:

Րաֆֆի Սիւլահեան ՀԱԼԷՊ


Կիրակի, 30 Մարտին, յաւարտ Ս. Պատարագի, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ՝ նորոգ հանգուցեալ եղբայր Միհրան Շիմշիրեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ական բոլոր ննջեցեալներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն: Թէեւ նոյն օրը եկեղեցւոյ շրջակայքը ինկած հրթիռները մեծ վնասներ պատճառեցին, սակայն հաւատացեալ ժողովուրդը իր աղօթքները բարձրացնելով երկնաւոր Տիրոջմէ խնդրեց, որ խաղաղութիւն պարգեւէ Սուրիոյ եւ մանաւանդ՝ Հալէպ քաղաքին:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ներկայացուցիչը եւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը ցաւակցութիւններ ընդունեցին «Արամ Մանուկեան» ժողովրային Տան «Լեւոն Շանթ» սրահը: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան արտասանեց եղբայր Շիմշիրեանի թաղման արարողութեան ընթացքին Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Մկրտիչեանին արտասանած դամբանական խօսքը, որուն մէջ յիշուած էր հանգուցեալ եղբոր անձնական եւ միութեանական կեանքի գիծերը: Եղբայր Թովմասեան ըսաւ. «Դժուար ու ծանր պարտականութիւն է հրաժեշտի խօսք արտասանել եղբ. Միհրան Շիմշիրեանի մասին, որ 67 տարուան Հ.Մ.Ը.Մ-ական ծառայութեամբ բեռնաւորուած՝ անակնկալօրէն հրաժեշտ կու տայ

ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԻԲՐԵՒ ՈՒԺԻ ԱՂԲԻՒՐ

Րաֆֆի Սիւլահեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդը նպատակ ունենալով աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ-ականները հաղորդակից դարձնել Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ շրջանի անցեալի եւ ներկայի գործունէութեան, յառաջացուց քարոզչական յանձնախումբ մը, որ 2013-ի Յունիս ամիսէն սկսեալ դիմատետրի Հ.Մ.Ը.Մ. Սուրիա (Homenetmen Syria) էջին մէջ գետեղել սկսաւ միութեան գործունէութեան առնչուող լուրեր, արխիւային նիւթեր եւ նկարներ: Քարոզչական յանձնախումբը ձեռնարկեց նաեւ դասախօսական երեկոներու շարքի



ՅԱՐԳԱՆՔ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂՔ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

իր հարազատներուն եւ իր սիրած միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին»:

Խօսքին մէջ նշուեցաւ, որ 71-ամեայ եղբայր Շիմշիրեանը ծանօթ էր բոլորին, որպէս առոյգ ու կայտառ Հ.Մ.Ը.Մ.ական, որուն կեանքը ամբողջական նուիրաբերում եղաւ հայ սկստութեան, հայ երիտասարդութեան, հայրութեան եւ Հայաստանին: Եղբօր աշխատանքը սահմանափակուած չէր միայն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերով. 26 տարի շարունակ, ան իր ծառայութիւնը բերաւ Լիբանանի սկստութեան ֆետերասիոնին:



Ապա, խօսք առաւ Տաթեւ Աւագ Քհնյ. Միքայէլեան եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ականը միշտ գնահատած եւ յարգած է իր անդամները իրենց կենդանութեան, յարգած է նաեւ իր ննջեցեալներուն յիշատակը: Անոնցմէ մէկն է Միհրան Շիմշիրեանը,

նր, որ մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն, որպէս կակուղ թաթիկ ու աւելի քան 6 տասնամեակ ծառայելով առ յաւիտ հեռացաւ: Քահանայ հայրը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականի մը նուիրումը կ'ըլլայ աշխարհի վրայ, ուր ան կեանքը կ'անցընէ ծառայութեամբ եւ զոհողութեամբ, իսկ երբ հրաժեշտ կու տայ այս աշխարհին, ան կը հեռանայ իր հարազատներէն, բարեկամներէն, միութենական

քոյրերէն-եղբայրներէն եւ կը միանայ երկինքի մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք եւս ծառայութիւն ունեցած են իրենց կեանքին ընթացքին:

Աւարտին, ներկաները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

մը, որուն առաջինը տեղի ունեցաւ Կիրակի, 23 Մարտի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցոյ ներքնասրահը, «Հաղորդակցութեան միջոցները» նիւթով:

Երեկոյին բացումը կատարեց յանձնախումբի ատենապետ եղբ. Րաֆֆի Սիւլահեան: Ան նախ ներկայացուց օրուան բանախօսը, լրագրող եւ իրաւաբան Մարիա Գաբրիէլեանը, ապա բեմ հրաւիրեց գինք: Նախքան դասախօսութիւնը, տեսերիզի վրայ ցուցադրուեցան արդի հաղորդակցութեան միջոցներու մասին տարբեր տարիքի ազգայիններու կարծիքները:

Դասախօսը իր նիւթին սկիզբը արագ ակնարկով մը անդրադարձաւ հաղորդակցութեան միջոցներու զարգացման հանգրուաններուն՝ մարդկութեան ծագումէն մինչեւ մեր օրերը: Ան նշեց, թէ հաղորդակցութեան միջոցները գոյութիւն ունեցած են, որպէսզի մարդ կարենայ բաւարարել իր կարիքները, արտայայտել իր ապրումները, զգացումները եւ պահանջները:

Գաբրիէլեան ըսաւ, որ հաղորդակցութեան միջոցներու շնորհիւ մարդուն ընկերային կեանքը բարելաւուեցաւ, ան կարողութիւն ունեցաւ վերարտադրելու իր լսածները, տե-

սածներն ու կեանքի փորձառութիւնները, այսպիսով մարդը որպէս մտաւոր էակ հետզհետէ սկսաւ շրջապատը հաղորդակից դարձնել իր ներքին աշխարհին: Մարիա Գաբրիէլեան հանգամանօրէն ներկայացուց պատմութեան ընթացքին մարդկութեան անկիւնադարձային նուաճումները, սկսեալ 15-րդ դարու տպագրական գիւտէն, հասնելով մինչեւ ճարտարարուեստի դար՝ ճայնասփիւռի, պատկերասփիւռի եւ ի վերջոյ համացանցի ու արբանեակներու յայտնաբերում: Ան լուսարձակի տակ առաւ հանրային կարծիքին կարեւորութիւնը, անոր ձեւաւորման պատճառներն ու տուեալները:

Քարոզչական արդի լրատուամիջոցներու մասին խօսելով, դասախօսը մերօրեայ կեանքէն օրինակներ քաղելով մատնանշեց անոնց ունեցած գործօն ազդեցութիւնը տարբեր խաւերու եւ մակարդակներու մարդոց վրայ: Եզրափակելով, ան ըսաւ, թէ արդի հաղորդակցութեան միջոցները, իբրեւ ուժի աղբիւր, դրական ազդակներու կողքին ունին նաեւ բացասական կէտեր, հետեւաբար մեզմէ կը պահանջուի ըլլալ զգօն, օգտուիլ անոնց ընծայած միջոցներէն եւ օգտագործել զանոնք ի շահ մեզի, ի շահ աշխարհին:



«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԿԱՄԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՄԻՆԱՐ



9 Փետրուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի կեդրոնական գրասենեակին մէջ տեղի ունեցաւ սեմինար մը, որուն ընթացքին սկաուտ պատասխանատուներու ներկայացուցեցան յառաջիկայ օրերուն ընկերային խնամքի հաստատութիւններուն մէջ տարուելիք սկաուտական աշխատանքները: Թիրախ ընտրուած խումբը նկատի ունենալով, յատուկ ուշադրութեան արժանացաւ գործունէութեան կազմակերպման ձեւը եւ հաղորդակցութեան արդի միջոցներով ներկայացումը:

«Սորվէ, որպէսզի սորվեցնես» սկզբունքով ներկաները պատրաստակամութիւն յայտնեցին փոխանցելու իրենց ձեռք ձգած գիտելիքները՝ անոնցմով բարձրանալու եւ բարձրացրնելու այն երեխաները, որոնց հետ կը պատրաստուին աշխատելու իրենք:

ԵՒՐՈՊԱ-ԵՒՐԱՍԻԱ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ - 2014

Թղթակից ԵՐԵՒԱՆ

13-16 Մարտին, Հելսինքիի մէջ տեղի ունեցաւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի եւրոպական շրջանի գործընկերութեան նուիրուած հանդիպումը, որուն մասնակցեցան Հ.Մ.Շարժումի անդամ 26 երկիրներու սկաուտական կազմակերպութիւններէն 70 պատուիրակներ:

Ուրախալի էր, որ հանդիպումը յատուկ ուշադրութիւն



դարձուց Եւրոպայի եւ Եւրասիոյ սկաուտական կազմակերպութիւններու համագործակցութեան կարելիութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը ներկայացնող վարչականներ քոյր Լիլիթ Զաքարեանն ու եղբայր Ռոմանոս Պետրոսեանը բոլոր մակարդակի իրենց շփումներուն ընթացքին ներկայացուցին կազմակերպութեան զարգացման եւ ընդլայնման ընթացքը: Հ.Մ.Շարժումի եւրոպական շրջանի երկիրներէն գործընկերներ ներգրաւելու նպատակով անոնք ունեցան լայն քննարկումներ ապագայ ծրագիրներու վերաբերեալ:

Հանդիպման իբրեւ արդիւնք հաստատուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի եւ Դանիոյ սկաուտական կազմակերպութիւններու միջեւ արդիւնաւէտ համագործակցութեան շարունակութիւնը, ինչպէս նաեւ կատարուեցաւ նախնական համաձայնութիւն՝ ձեռնարկելու միացեալ ծրագիրներ եւ փոխանակման նախագիծեր Ֆրանսայի սկաուտներուն հետ:



Բ. ԿԱՐԳԻ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ

21 -23 Մարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 80 նորընծայ քոյրերը եւ եղբայրները մասնակցեցան Աղաւնաձորի մէջ կազմակերպուած Բ. կարգի դպրոց-բանակումին, որուն նպատակն էր զարգացնել սկաուտներու գիտելիքներու մակարդակը եւ գործնական կարողութիւնները:

Բովանդակալից եւ անմիջական միջնորդի մէջ, ծրագիրը իրագործուեցաւ յաջողութեամբ: Փոխանցուած գիտելիքներու ամրապնդման նպատակով կատարուեցաւ զարգացման մրցում, որուն ընթացքին մասնակիցները ի յայտ բերին Բ. կարգի գիտելիքներու իրենց իմացութիւնը:



Սկաուտական տեսական եւ գործնական հմտութիւններու իւրացումը աւելի եւս օգնեց մասնակիցներուն համահունչ ըլլալու միութեան նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրա-



ՄԿԱՌԻՏԸ ԿԸ ՍԻՐԷ ԵՒ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԲՈՅՍԵՐՆ ՈՒ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԸ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

25 Մարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. գործակցութեան յուշագիր մը ստորագրեց «Երիտասարդ կենսաբաններու ընկերակցութիւն» հասարակական կազմակերպութեան հետ:

Յուշագիրը կը նպատակադրէ Արմաւիր քաղաքին մէջ ստեղծել բնապահպանման ակումբ մը, որուն պարտականու-

թիւնը պիտի ըլլայ ուսումնասիրել շրջանի կենդանական եւ բուսական հարստութիւնը:

Յուշագիրին հիմամբ, Արմաւիրի սկաուտները կարելիութիւնը պիտի ունենան իրենց մասնակցութիւնը բերելու կենսաբաններու մասնագիտական սեմինարներուն եւ դաշտային աշխատանքներուն, այդ ճամբով հարստացնելով իրենց գիտելիքները եւ գործնապէս կիրարկելով սկաուտական դաւանանքի ութերորդ կէտը, այն որ՝ «Սկաուտը կը սիրէ եւ կը պաշտպանէ բոյսերն ու կենդանիները»:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇ ԾԻՒՂԵՐՈՒԲՆ ԱՐՇԱՒ-ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան կազմակերպած արի-արենոյշ ճիւղերուն արշաւ-բանակումը տեղի ունեցաւ 26 եւ 27 Ապրիլ 2014-ին:

ՀՄԸՄ-ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Փրտէյտի եւ Ռաուտայի մասնաճիւղերէն 210 արի-արենոյշներ, Շաբաթ, 26 Ապրիլ 2014-ին արշաւեցին Պիքֆայայէն Պոլոնիա երկարող ճամբան, անցնելով տարբեր հանգրուաններէ եւ լուծելով սկաուտական հարցարաններ:

Խումբերը երեկոյեան հասան Պոլոնիայի անտառներուն մէջ ճշգրտած վայրը եւ եռանդուն թափով անցան բանակա-

վայրի յարդարման: Աւելի ուշ, անոնք անցուցին շատ ճոխ ու խանդավառ ժամանակ խարուկահանդէսի ընթացքին, երգելով, պարելով եւ սկաուտական հաճելի դրուագներ ներկայացնելով: Կիրա-



կի, 27 Ապրիլ 2014-ի առաւօտեան, դրօշակի արարողութենէն ետք, խմբակները անցան խմբապետութեան կողմէ պատրաստուած հանգրուանային խաղերու մրցակցութեան, որուն ընթացքին տիրեց հաճելի եւ խանդավառ մթնոլորտ:

Բանակումին աւարտին տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, որուն ընթացքին յայտարարուեցան լաւագոյն խմբակները: Լաւագոյնները արժանացան սկաուտական յատուկ նուէրներու:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԷՑ-ՊԱՐՄԱՆՈՒՀԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԶԶԵԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 27 Ապրիլ 2014-ին տեղի ունեցաւ երէց-պարմանուհի ճիւղերու միացեալ յայտագիրը, Հայկազեան համալսարանի «Տէրեան» հայագիտական գրադարանին մէջ:

Միացեալ յայտագիրը նուիրուած էր Ապրիլեան նահատակներու ոգեկոչման 99-ամեակին, հաւատարիմ մնալով երէ-



ցական խոստումին՝ «Ծառայել ազգիս, հայրենիքիս ու ամբողջ ուժովս աշխատիլ հայ ժողովուրդի իրաւունքներու վերատիրացման համար: Պայքարիլ այլասերման եւ ապագգայնացման դէմ՝ պահպանելով հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը»:

Յայտագիրը սկսաւ Բաֆֆի Տէմիրճեանի ղասախօսութեամբ՝ «Թրքական կառավարութեան ուրացումի քաղաքականութիւնը եւ հայ երիտասարդին դերը՝ զայն դիմակալելու» նիւթով: Երէց-պարմանուհիները ուշի-ուշով մտիկ ըրին Տէմիրճեանի օգտաշատ տեղեկութիւնները, բացատրութիւնները եւ դիտեցին թրքական կառավարութեան ուրացումի քաղաքականութիւնը ներկայացնող կարգ մը տեսերիզներ:

Ապա, Հայկազեան Համալսարանի զոյգ գրադարաններու տնօրէնուհի Սոնիա Սիսլեան ամփոփ կերպով ներկայացուց գրադարաններու մէջ աշխատանքի եղանակը եւ բացատրեց Հայկազեան Համալսարանի զոյգ գրադարաններու կայքէջի գործածութեան ձե-



ւր, որմէ ետք փաղանգները տասնեակային դրութեամբ առիթը ունեցան օգտագործելու հայկական գրադարանը եւ կարճ ժամանակի ընթացքին փնտրուող-պրպտումներէ ետք ներկայացուցին Հայկական Յեղասպանութեան մասին իրենց ձեռք ձգած տեղեկութիւնները:

Յայտագրի աւարտին Շրջանային

խմբապետութեան կողմէ խօսք առնելով Լիբանանի Ֆետերասիոնի խմբապետ եղբ. Կարէն Աբրահամեան յայտնեց, թէ պէտք է «Յիշենք Հայկական Յեղասպանութիւնը, յիշեցնենք համայն աշխարհին եւ պահանջենք մեր դատին արդար հատուցումը»:

Յայտագիրը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY





Photos: © Yann Arthus-Bertrand, Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio WICKEN 2005 PARIS

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey

Guided Tours
for 8 Days
or 12 Days



11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



«ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՆՇՈՒՄ ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ

Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

«Գործել բարիք մը ամէն օր» կարգախօսին հետեւելով, Հ.Մ.Ը.Մ-ի ՊՈՒՐԾ Համուտի մասնաճիւղը Շաբաթ, 1 եւ Կիրակի, 2 Մարտին նշեց «Հայ սկաուտի օր»ը: Շաբաթ՝ օժանդակելով հայ կարիքաւոր ընտանիքի մը, իսկ Կիրակի՝ տողանցքով եւ անոր յաջորդող ձեռնարկով:

Շաբաթ օրը բաժնուած էր զանազան հանգրուաններու: Նախ, կարիքաւոր ընտանիքի անդամները այցելեցին վարսալարդարի, ուր բոլոր անդամներուն յատուկ խնամք տրուեցաւ, ապա՝ ընտանիքի անդամները, խմբապետներու ընկերակցութեամբ, ընտրեցին իրենց նոր հագուստներն ու կօշիկները, որմէ ետք ուղղուեցան Համազգայինի գրախանութ, ուր ստացան տարբեր տեսակի պատմութեան գիրքեր: Ապա, անոնք ուղղուեցան «Պատկեր» ճաշարան՝ հայկական համեղ պատառ մը ուտելու: Իսկ անկէ ետք, Ճիւնիի շրջանէն ճոպանուղիով բարձրացան Հարիսա, ուր Մայր Աստուածածնի արձանին մօտ աղօթելէ ետք վերադարձան «Սիթի մոլ»ի կից գտնուող խաղավայրը:

Օրուան աւարտին, անոնք այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի ՊՈՒՐԾ Համուտի մասնաճիւղի ակումբը, ուր ունեցան խորովածի երեկոյ մը՝ մասնաճիւղի սկաուտներուն հետ:

Այսպէսով, Հ.Մ.Ը.Մ-ի ՊՈՒՐԾ Համուտի մասնաճիւղի սկաուտները այս աշխատանքով, դարձեալ փաստեցին, որ իրենք կը հետեւին «Գործել բարիք մը ամէն օր» կարգախօսին:



ՏՈՂԱՆՑՔԸ ԵՒ ՁԵՌՆԱՐԿԸ

Կիրակի, 2 Մարտին, մասնաճիւղը պաշտօնական հանդիսութեամբ մը նշեց «Հայ սկաուտի օր»ը: Սկաուտներ առաջին հերթին տողանցեցին ՊՈՒՐԾ Համուտի փողոցները, որմէ ետք սկիզբ առաւ տօնակատարութիւնը՝ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիրանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդին, Շրջանային խմբապետութեան, մասնաճիւղի վարչութեան, Սկաուտական Խորհուրդին, ինչպէս նաեւ՝ ծնողներու եւ բարեկամներու:

Ձեռնարկը սկիզբ առաւ «Ով հայ արի» երգով՝ կատարողութեամբ մասնաճիւղի արի խումբի անդամներուն, որմէ ետք, խմբապետական կազմին անունով բացման խօսքը արտասանեց քոյր Ալին Արապաղլեան: Ան ըսաւ, թէ «Հայ սկաուտի օրը կը տօնենք Փետրուար ամսուան ընթացքին, որովհետեւ Փետրուար ամիսը կը զուգադիպի համաշխարհային սկաուտութեան հիմնադիր Լորտ Պէյտըն Փաուըրի ծննդեան ամսուան, իսկ հայութեան համար այս ամիսը յատկանշուած է՝ Վարդանանցով, Փետրուարեան ապստամբութեամբ, Արցախեան ազատագրական շարժումով»:

Բացման խօսքէն ետք սկաուտները կատարեցին գեղարուեստական յայտագիր, որ կ'ընդգրկէր՝ երգ, նուագ, ասմունք, պար, բուրգ, տեսերիզի ցուցադրութիւն:

Ձեռնարկը փակուեցաւ «Յառաջ, նահատակ» քայլերգով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

«ՍԿԱՌԻՏԸ ՄԻՇՏ ԿՕՐՆԷ ՈՒՐԻՇԻՆ» ԴԱԻԱՆԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Ֆիզիքական զարգացման կողքին, սկաուտներ կը զարգանան նաեւ հոգիով ու մտքով: Աւելին, սկաուտներ իրենց անձերէն եւ խումբերէն անկախ՝ գոհացում կու տան նաեւ իրենց շրջապատին եւ կ'օժանդակեն ուրիշին, ինչպէս որ կը թելադրէ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտական դաւանանքի կէտերէն մէկը՝ «Սկաուտը միշտ կ'օգնէ ուրիշին»:



Այս նպատակով ալ, 2014-ի առաջին օրերուն, Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուլթի մասնաճիւղի արենուշական խմբակները այցելեցին շրջանի տարեցներու տուները եւ նուիրեցին իրենց կողմէ պատրաստուած բացիկներ, ձեռագիրներ եւ անուշեղէններ: Անոնք մտերմիկ ու հաճելի պահեր անցուցին տարեցներու հետ՝ ներկայացնելով երգեր ու մաղթանքներ:



Արենոյշներ այս այցելութիւններուն ընդմէջէն հասկցան, թէ ինչքան հաճելի եւ շինիչ ժամեր կարելի է անցընել խօսակից դառնալով աւագ սերունդի մարդոց հետ:

«ՄԻԱՍՆԱԲԱՐ ՋԱԼԱԽՔԻ ՀԱՄԱՐ»

Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտական կեանքին մէջ կարեւոր տեղ կը գրաւէ ազգային դաստիարակութիւնը: Դարձեալ հետեւելով ուրիշին օգնելու սկաուտական դաւանանքի կէտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուլթի արենոյշները կազմակերպեցին քարոզչական արշաւ եւ հանգանակութիւն՝ Ջալախքի հայրութեան համար: «Միասնաբար Ջալախքի համար» նշանախօսքով, մէկ ամսուան տեւողութեան անոնք պատրաստեցին պատի թերթեր, յայտարարութիւններ, որմազղներ եւ մասնաճիւղի սկաուտներուն ծանօթացուցին Ջալախքը ու անոր ներկայի հարցերը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

Studio MCKEN 2005, PARIS



Առաջին հերթին արենոյճներ, իրենց խմբապետներուն օժանդակութեամբ, կատարեցին պրպտումներ եւ ծանօթացան Ջաւախքին ու անոր առօրեայ հարցերուն: Ապա, արենուշական ամէն մէկ խմբակ մասնաճիւղի տարբեր խումբերուն ներկայացուց իր պրպտումներուն արդիւնքները, տարբեր միջոցներով՝ ըստ տարիքի յարմարութեան: Բերանացի ներկայացումներու կողքին՝ երէցներուն ու պարմանուհիներուն ցուցադրուեցան տեսերիզներ, արիներուն բաժնուեցան բացատրողական թղթիկներ, գայլիկներուն համար պատրաստուեցաւ զարգացման մրցում մը, եւ արծուիկներուն թատրոնի միջոցով փոխանցուեցան Ջաւախքի հայութեան դժուարութիւնները:

Ներկայացումներու կողքին, արենուշական ամէն մէկ խմբակ պատրաստեց պատի թերթ մը, որ գետեղուեցաւ ակումբի մուտքին՝ գրաւելով ծնողներու եւ բարեկամներու ուշադրութիւնը: Հոն ներկայացուեցան Ջաւախքի մէջ տիրող կրթական, մշակութային, քաղաքական եւ տնտեսական-ընկերային ծանր պայմանները: Վերջապէս, արենոյճները յայտարարութիւններով ու որմագրներով կոչ ուղեցին սկաուտներուն, ծնողներուն եւ մասնաճիւղի բարեկամներուն՝ մասնակցելու հանգանակութեան մը, որ կատարուեցաւ յաջորդական երկու շաբթուան ընթացքին՝ սկաուտական հաւաքներուն, Սուրբ Յակոբ եկեղեցոյ անուանակոչութեան եւ արենոյճներու թէյասեղանի հանդիպումին ընթացքին: Հաւաքուած գումարը հասաւ 500 ամ. տոլարի, որ յանձնուեցաւ գաղութի Ջաւախք-Արցախ-Արեւմտահայաստան (ՋԱՀ) յանձնախումբին՝ տրամադրուելու համար Ջաւախքահայութեան կարիքներուն: Ծիշող է, որ հաւաքուած գումարը խորհրդանշական էր եւ մեծ չէր, սակայն նախաձեռնութիւնը առիթ մը հանդիսացաւ, որպէսզի սկաուտներ անոր միջոցով ծանօթանան հայ դատի անձանօթ մէկ երեսին, եւ անոնց մէջ զարգանայ հայրենիքի հանդէպ պարտականութեան գիտակցութիւնը:

ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

- Սկաուտական կեանքն ու առօրեան կը յատկանշուին տարբեր բնոյթի աշխատանքներով, որոնք կու գան յաւելեալ



իմաստ, գրաւելութիւն տալու ընթացիկ գործունէութեան՝ որոշ պատգամ մը փոխանցելով եւ դաստիարակելով նորահաս սերունդները:

25 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.ի արծուիկներուն ներկայացուած դասախօսական նիւթն էր՝ «Կենցաղավարութիւն»: Նիւթը իր մատուցման եղանակով յատուկ էր, տրուած ըլլալով որ դասախօս Ռիմա Չոլաքեան, իբրեւ կրթական մշակ եւ փորձառու ուսուցչուհի, տեսականի կողքին, ներկայացուց նաեւ շօշափելի ցուցմունքներ:

- 18 Յունուարին, մասնաճիւղի արծուիկներուն փոխանցուեցաւ «Երաժշտական բուժում. փորձարկում՝ այլընտրանքային գործիքներու միջոցով» խորագիրով դասախօսութիւնը, զոր ներկայացուց մանկավարժ եւ արուեստագէտ Անիթա Թուֆիկեան:

ՇԱՐԱԹՕՐԵԱՅ ՅԱՅՏԱԳԻՐ ՔԱՀԼ-Ի ԾԵՐԱՆՈՅԻՆ ՄԷՉ

Արծուիկի մը յատուկ «Գործել բարիք մը ամէն օր» խոստումին անսալով, արծուիկներ իրենց շաբաթօրեայ յայտագիրներէն մէկը կատարեցին ՔԱՀԼ-ի ծերանոցին մէջ՝ մամիկներուն եւ պապիկներուն հետ բաժնեկցելով ուրախ միջնորդութիւնը:

Արծուիկները արդէն նախապէս պատրաստած էին փոքրիկ ձեռագիր աշխատանքներ: Անոնք նաեւ ծնողներէ եւ բարեկամներէ հաւաքած էին հագուստ, ուտելիք, չիր-չամիչ եւ այլն:

Յայտագիրին մասնակցեցան 30 արծուիկներ եւ խմբապետական կազմի անդամներ: Անոնք ներկայացուցին խմբային երգեր ու կանչեր: Նոյն առիթով, անոնք նուէրներ բաժնեցին ծերերուն եւ հիւրասիրեցին զանոնք:

Միջնորդողը շատ ջերմ էր, մտերմիկ եւ ընտանեկան: Արծուիկները զրուցեցին մամիկներուն եւ պապիկներուն հետ, պատմութիւններ պատմեցին եւ ապրեցան ընտանեկան հայաշունչ պահեր: Անոնք նաեւ սորվեցան, թէ տօնական առիթներով եւ այլապէս պէտք է միշտ յիշել երէցներն ու կարիքաւորները:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի նախապատրաստութեան աշխատանքներու ծիրէն ներս, «Քինկըսթըն Տելթա» համալիրին մէջ տեղի ունեցաւ խմբապետական սեմինար մը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սոնթրէալի, Թորոնթոյի եւ Գէմպրիձի մասնաճիւղերու պատասխանատուներուն:



with the complements of

ABRIMIAN BROTHERS, NEW YORK



ԻՐԱՒԱՏԵՐ ՈՒ ՊԱՀԱՆՁԱՏԵՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ



Ալմեյո



Փարիզ



Գահիրե



Ալմեյո



Ալմեյո





Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՐՍԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԸ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 46-ԱՄԵԱԿԸ ԿԸ ԹԵԲԱԿՈՒՆԷ ՆՈՐ ՆՈՒԱԾՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ

Մարտ Բեռնից ԼՈՍ ԱՆՃԵԼՐՍ

Անցեալ տարի, զոյգ ձեռնարկներով իր հիմնադրութեան 45-ամեակը մեծ ոգեւորութեամբ նշելէ ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելլոսի մասնաճիւղը աշխուժութեամբ դիմաւորեց 2014 տարեշրջանը, վարչութեան նոր կազմով եւ նորանոր նուաճումներու հեռանկարով:

Մասնաճիւղի Դեկտեմբեր 2013-ի տարեկան ընդհանուր ժողովը մասնաճիւղը ղեկավարելու գծուարին պարտականութիւնը վստահեցաւ եօթը երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներու - Յովիկ Շահինեան (ատենապետ), Օննիկ Պէրպէրեան (փոխ ատենապետ), Կարինէ Պոնեանեան (քարտուղար), Լուսի Թիւթիւնեան (գանձապահ), Բաֆֆի Խամիսեան, Անդրէաս Հինտոյեան եւ Բաֆֆի Պապայեան:

Մասնաճիւղին ամանորեայ առաջին դրական քայլը առնուեցաւ սկստական բաժանմունքին կողմէ: 5 Յունուար 2014-ի գիշերը, հայկական Ս. Մնունդին առիթով եւ սկստական վարիչ կազմին գլխաւորութեամբ, բաժանմունքը այցելեց իր անդամներուն տունները եւ աւետեց Յիսուս Քրիստոսի ծնունդը: Երրորդ տարին ըլլալով, այս գեղեցիկ նախաձեռնութիւնը մեծապէս գնահատուեցաւ հիւրընկալ անդամներու ընտանիքներուն կողմէ:

Նոյն ոգեւորութեամբ, սկստական բաժանմունքը, Ամանորի ուրախ միջնոյրտը հայ ծերունիներուն փոխանցելու եւ զանոնք մխիթարելու հեռանկարով, այցելեց «Արարատ Տուն» եւ գեղարուեստական ուրախ ծրագիր մը գործադրելով՝ ուրախացուց առանձին մնացած ծերունիները եւ ստացաւ անոնց օրհնութիւնները:

Միւս կողմէ նորընտիր վարչութիւնը կեդրոնացաւ մասնաճիւղի կազմակերպչական աշխատանքներուն վրայ՝ գլխաւոր նպատակ ունենալով առաւել աշխուժացնել սկստական եւ մարզական բաժանմունքները եւ անոնց ընդմէջէն՝ խտացնել իր անդամական շարքերը, ինչպէս նաեւ ընդարձակել համակիրներու շրջանակը:

Նման հական աշխատանքներ իրականացնելու համար, վարչութիւնը հաւատարմով միասնական աշխատանքին, կեանքի կոչեց զանազան յանձնախումբեր՝ սկստական, մարզական, քարոզչական, դաստիարակչական, ծնողական, օժանդակ եւ ընկերային, աշխատանքի հրաւիրելով իւրաքանչիւր մարզի մէջ փորձառու եւ հմուտ իր անդամները:

Նշանակուած այս յանձնախումբերը քով-քովի բերելու,

իրարու ծանօթացնելու եւ անոնց աշխատանքային ծրագիրները բոլորին սեփականութիւնը դարձնելու համար, վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացաւ կազմակերպելու ընթրիքի երեկոյ մը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 7 Փետրուարին, «Գաւառ» ճաշարանը: Հրաւերին ընդառաջեցին շուրջ հարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնց կարգին՝ մասնաճիւղի երիցագոյն անդամ Սամուէլ Մկրտիչեան:

Ներկաները բարի գալուստի խօսքերով ողջունեց նորընտիր վարչութեան երիտասարդ ատենապետ Յովիկ Շահինեան, որ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, վարչութեան հրաւերին ընդառաջած ըլլալուն համար, ինչ որ ինքնին աշխատանքի սկսելու դրական երեւոյթ մըն էր:

«Վստահ եմ, որ ձեզմէ իւրաքանչիւրը, հաւատարմով Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ անոր հետապնդած նպատակներու իրականացման կարեւորութեան՝ ներկայ է հոս: Ձեր ներկայութիւնը դրական երեւոյթ է եւ կը յուսադրէ նորընտիր վարչութիւնը: Ձեզմէ իւրաքանչիւրը իր աշխատանքով կրնայ նորութիւն մը բերել եւ բեղուն գործունէութեամբ հարստացնել Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելլոսի մասնաճիւղը, որ մայրը կը հանդիսանայ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին», ընդգծեց եղբ. Շահինեան եւ կոչ ուղղեց բոլորին, որ համախմբուին վարչութեան շուրջ, ձեռք երկարեն անոր աշխատանքներուն, որպէսզի ան յաջողութիւններով վերանորոգուի եւ նորանոր նուաճումներ արձանագրէ:

Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ եղբ. Սամուէլ Մկրտիչեան, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմական կարեւորութեան եւ հայութեան բերած նպաստին անդրադառնալով ընդգծեց անոր ունեցած հայապահպանման առաքելութիւնը: Եղբ. Մկրտիչեան շեշտեց, որ յատկապէս Միջին Արեւելքի մէջ կազմակերպուած Հ.Մ.Ը.Մ.ի սկստական խրոխտ շարքերը եւ Փոլիթպոլի մարզէն ներս արձանագրուած յաղթանակները ո՛չ միայն հայութեան հպարտանքը դարձած են, այլեւ հիացմունք պատճառած են տեղացի ժողովուրդներուն եւ անոնց ակումբներուն:

Ոգեւորիչ իր խօսքերով եղբայրը խրախուսեց ներկաները կառչած մնալու կարեւոր այս միութեան եւ շեշտեց՝ ըսելով՝ «Հ.Մ.Ը.Մ.ը հայապահպանման, մարդակերտման դպրոց մըն է: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է յաւերժ ապրի: Կառչած մնացէք կարեւոր այս միութեան եւ ձեր հաւատքով, անսակարկ գործունէութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը վերադարձուցէք իր նախկին փառքի օրերուն»:

Ապա, եղբայրը վարչութեան նուիրեց երկու օրինակ իր հրատարակած «Երգեր Ու Վէրքեր» գիրքէն: Այնուհետեւ, բեմ հրաւիրուեցան մասնաճիւղի յանձնախումբերու պատաս-

խանատուները, որոնք ներկայացուցին իրենց մշակած տարեկան ծրագիրներն ու զանոնք իրականացնելու միջոցները:

Ստեղծուած ոգեւորիչ միջնորդութիւն խրախուսուած՝ ելոյթ ունեցան մասնաճիւղի անցեալի խմբապետ-պատասխանատուները, որոնք խոստացան իրենց աջակցութիւնը բերել մասնաճիւղին վերելքին:

Եզակի այս երեկոն վերջ գտաւ գիշերուան ուշ ժամերուն: Երեկոն ընկերային գեղեցիկ հաւաք մը ըլլալուն առնթեր, նաեւ վերանորոգուելու գեղեցիկ առիթ մը հանդիսացաւ ներկաներուն համար, որոնք ոգեւորուած հեռացան սրահէն, մասնաճիւղին կառչած մնալու եւ անոր յաջողութեանց մասնակից դառնալու հաստատակամութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՄՆ «ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆ» ԱՅՅԵԼՈՒԹԻՒՄՆԸ

Կիրակի, 9 Փետրուարին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի մասնաճիւղի սկաուտներուն «Արարատ Տուն» տարեկան այցելութիւնը, որուն մասնակցեցան 55 սկաուտներ:

Տարեկան հերթականութեամբ կատարուող այս այցելութեան նպատակն է գուարձացնել հայ տարէցները գեղարվեստական ճոխ յայտագիրով:

Այս տարուան այցելութեան ընթացքին սկաուտները ներկայացուցին սկաուտական շարք մը երգեր ու կանչեր, ինչպէս նաեւ՝ ազգային երգերու փունջ մը: Գայլիկներն ու արծ-

ւիկները արտասանեցին «Խօսք իմ որդուն» արտասանութիւնը, իսկ «Արի» խմբակը տարէցները հիացուց՝ կազմելով մարդկային երեք բուրգեր:

Իրենց կարգին, Կակուղ թաթիկները արտասանեցին «Հայ եմ ես»ը:

Աւարտին, բոլոր սկաուտները առիթը ունեցան անհատաբար գրուցելու տարէցներուն հետ՝ աւելի մօտէն ծանօթանալով անոնց:



Pink Kimberley
AUSTRALIA

PinkKimberley.com.au



Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



ՊԵՏԻԿ ԵՒ ՄԵՐԻ ՖԵՐՄԱՆԵԱՆ ԱՄՈՒԸ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 39-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կը տեղեկացնէ, թէ Պետիկ եւ Մերի Ֆերմանեան ամուլը պիտի ըլլայ այս տարուան Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահը:



րապէս մեր համայնքին համար: Հ.Մ.Ը.Մ.ի կամաւորներուն տարած արտակարգ աշխատանքը իսկապէս հիանալի է ու գլխաւոր գրաւականն է այս մարզախաղերու յաջողութեան: Մեծապէս ուրախ ենք, որ առիթը պիտի ունենանք գործնականապէս մասնակից դառնալու այս տարուան խաղերուն եւ տօնակատարութեանց», կը յայտնէ Պետիկ Ֆերմանեան:

Բարերար ամուլը, որ սեփականատէրն է «Սուփըր Բինկզ Մարքէթ»ին, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մաս կը կազմէ տասնամեակներէ ի վեր: Ան առատաձեռնօրէն ըստանձնած է մարզախաղերու պատուոյ նախագահի կարեւոր դերակատարութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Ֆերմանեան ընտանիքին ու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ջերմագոյն երախտագիտութիւնը կը փոխանցէ անոր:

«Կը գիտակցինք, թէ Հ.Մ.Ը.Մ.ը որքա՛ն կարեւոր աշխատանք կը տանի մեր երիտասարդութեան ու ընդհանրապէս մեր համայնքին համար: Հ.Մ.Ը.Մ.ի կամաւորներուն տարած արտակարգ աշխատանքը իսկապէս հիանալի է ու գլխաւոր գրաւականն է այս մարզախաղերու յաջողութեան: Մեծապէս ուրախ ենք, որ առիթը պիտի ունենանք գործնականապէս մասնակից դառնալու այս տարուան խաղերուն եւ տօնակատարութեանց», կը յայտնէ Պետիկ Ֆերմանեան:

ՖՐԵՂՆՈՅԻ «ՍԱՍՈՒՆ» ՄԱՍՆԱԾԻԴԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՆ

Սարգիս Փանոսեան ՖՐԵՂՆՈ

Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղի խմբապետական կազմը գեղեցիկ գաղափարը ունեցած էր շրջանին մէջ գործող ամերիկացի սկաուտներուն հետ բարեկամական կապեր ստեղծելու, եւ այդ նպատակով, Կիրակի, 9 Փետրուարի կէսօրուան ժամը 2-ին, առաջին հանդիպումը տեղի ունեցաւ տեղւոյն Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ հայ եւ ամերիկացի սկաուտներու:

կի խաղերով եւ անակնկալներով: Ուրախ միջնորդութիւն մէջ բացատրութիւններ տրուեցան հայկական գաւառներու մէջ Բարեկենդանի առիթով տեղի ունեցած աւանդական խաղերուն մասին: Քոյրերն ու եղբայրները ճաշով հիւրասիրուելէ ետք, ուրախ տրամադրութեամբ հեռացան սրահէն:

հայ ընտանիքներուն կողմէ՝ արժանանալով անոնց ջերմ հիւրասիրութեան եւ զովասանքին: Խումբերուն ընկերակցած են ծնողներ:

Նախ իւրաքանչիւրը ներկայացուց իր գործելաձեւը, ապա տեղի ունեցան հարցադրումներ եւ կարծիքներու փոխանակումներ: Աւարտին, որոշուեցաւ կանոնաւոր կերպով շարունակել նման հանդիպումներ: Ամերիկացի սկաուտներու մեկնումէն ետք, կէսօրէ ետք ժամը 3-ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, Բարեկենդանի առիթով տեղի ունեցաւ սկաուտական հաւաք՝ զանազան տեսա-

Նաեւ, տարիներէ ի վեր, աւանդութիւն դարձած է, որ Խիթման գիշերը՝ Յունուար 5-ին, սկաուտները տունը շրջելով՝ Քրիստոսի Ծնունդը աւետեն, սակայն այս տարի, հայրենակիցներու փափաքին ընդառաջելով, այդ մէկը Յունուար 4-ին կատարեցին, որովհետեւ շատեր Յունուար 5-ի Պատարագէն ետք կը փափաքին ներկայ գտնուիլ Խիթման ընթրիքին: Խմբապետական կազմը սիրով ընդառաջեց հայրենակիցներու փափաքին:

Վերջապէս, «Սասուն» մասնաճիւղի սկաուտական ձմեռնային բանակումը տեղի ունեցաւ Շէյվըր լիճի ափին, մասնակցութեամբ Ուոլնաթ Քրիքի «Կարս» եւ Սանթա Քլարայի «Անի» մասնաճիւղերուն: Երեք մասնաճիւղերէն մասնակցեցան 40 քոյրեր, եղբայրներ եւ պատասխանատու խմբապետներ: Ընդհանրապէս, այս բանակումներուն ընթացքին անտառները ծածկուած կ'ըլլային ձիւնով, սակայն այս տարի, ինչպէս կը վկայէ պատասխանատու խմբապետուհին, «բանակումը տեղի ունեցաւ կանաչապատ անտառի մէջ. մեր քոյրերն ու եղբայրները վայելեցին անտառին գիշերային լուսութիւնը, իսկ ցերեկը, արշաւներու ժամանակ, դիտեցին խիտ անտառին դէպի երկինք բարձրացող ծառերը եւ ունկնդրեցին թռչուններուն անոյշ գեղգեղանքը»:

Ըստ խմբապետական կազմին, ըսկաուտները բաժնուած են չորս խումբի եւ այցելած են շուրջ 40 տուններ: Անոնք մեծ ոգեւորութեամբ դիմաւորուած

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան ՊԵՅՐՈՒԹ

Երաժշտական նուագարանները ստեղծուած են, որպէսզի երաժշտական հնչիւններ ստանանք: Կան ժողովրդական եւ արհեստավարժ երաժշտական նուագարաններ:

Ժողովրդական երաժշտական նուագարանները կարեւոր դեր ունին ժողովուրդներու կեանքին մէջ: Ամէն ժողովուրդ ունի իրեն բնորոշ նուագարաններ: Դարերու ընթացքին անոնք իրարու փոխանցած են նուագարաններ եւ այդ պատճառով ալ երբեմն դժուար կ'ըլլայ գիտնալ, թէ ո՞ր նուագարանը ո՞ր ազգին կը պատկանի: Երբեմն ժողովուրդներ կը վիճաբանին նոյն նուագարանին ծննդեան շուրջ: Մենք՝ հայերս ալ ստեղծած ենք տարբեր նուագարաններ, ինչպէս նաեւ ընդունած, փոփոխութեան ենթարկած եւ մեզի հարազատ դարձուցած ենք այլ ժողովուրդներու նուագարաններ:

ՍՐԻՆԳԸ

Սրինգը կամ փողը զուտ հովուական, ազգային նուագարան է: Զայն կը շինեն եղէգէն, փայտէն եւ մետաղէն: Երկարութիւնը 40-70 սմ. է, հաստութեան տրամագիծը՝ 2.5-3 սմ.: Ունի 10 ծակ: Կը գործածեն վերին ութ ծակերը, որովհետեւ վարի երկուքը շատ հեռու են եւ մատները չեն հասներ:



Հին ատեն սրինգ կը նուագէին հովիւները, որոնք ոչխար արածելու ատեն ծառին տակ կը նստէին ու նուագէին:



ՏՈՒՏՈՒԿԸ

Տուտուկը շա-

յաստանի եւ դրացի երկիրներուն մէջ տարածուած փողային գործիք մըն է: Ան կը պատրաստուի ծիրանի կամ թթենիի ծառերու փայտէն: Երկարութիւնը 30.5 սմ է: Վերջին տարիներուն ան շատ տարածուած է աշխարհի մէջ: Համաշխարհային երաժիշտներ տուտուկը շատ կը գործածեն իրենց ստեղծագործութիւններուն մէջ:

ՊԱՐԿԱՊՁՈՒԿԸ

Պարկապղուկ կը նշանակէ պարկը սեղմելով, ճզմելով ձայն հանող նուագարան: Ասով կը նուագեն ուրախ պրեղանակներ: Ան կը պատրաստուի փոքր եղջերաւոր կենդանիներու տիկերէն: Նըւագելու ժամանակ զայն կը դնեն թելին տակ: Այս նուագարանը տարածուած է ամբողջ աշխարհի մէջ:



ՔԱՆՈՆԸ

Քանոնը լարային կամ իթային նուագարան մըն է: Սեղանի ձեւ ունի: Իրարու միացած է առանձին փայտերով: Ունի 24-26 եռակի լար: Կը նուագեն մատնորու դրուած մատնոցի կնտկնտոցի միջոցով: Քանոնը կը նուագեն ծունկերուն վրայ, ձախ ոտքը աջին վրայ դրուած:






ՏՀՈԼԸ

ՏՀոլը երկթաղանթ հարուածային թմբուկ մըն է, որուն շրջանակը պատ-
րաստուած է եղեւինի, ընկուզենի, սոճիի փայտէն, իսկ գլանը՝ այծի կամ
հորթուկի կաշիէն: Գլանը 30-40 սմ. է: ՏՀոլը ուսէն կախելու համար խա-
չաձեւ պարաններուն ամրացուած է գօտի: Չայն կը նուագեն ձեռքի մատ-
ներու միջոցով կամ փայտիկներու օգնութեամբ, որոնք կ'ըլլան տարբեր
հաստութեամբ եւ կը կոչուին տարբեր անուններով՝ թակիչ, տմբիչ, ճիպոտ
եւ այլն:



ՔԱՄԱՆՉԱՆ

Քամանչան գունդի ձեւով աղեղնալարային նուագարան մըն է, որ ու-
նի 3-4 մետաղեայ լարեր: Ան շատ տարածուած է նաեւ իրանի մէջ: Նուա-
գելու ատեն զայն կը բռնեն ձախ ձեռքով, իսկ աղեղը՝ աջ: Ներկայիս տա-
րածուած է 4 լարանի Քամանչան, որուն հեղինակը հայազգի քամանչահար
Օհանեզաչուիին է:



«ՔԱՐԵՐՈՒ ԱՆՏԱՌ»Ը

«Քարերու
ան-
տառ»ը
կը գտնուի Չինաստանի
հարաւ-արեւմուտքը՝
Եունան գաւառին մէջ,
ունի 12 հազար քառ-
քմ. տարածութիւն: Ան յառաջա-
ցած է փոթորիկներու, տեղատա-
րափներու եւ հողի սահանքներու
պատճառով քշուած անթիւ ժայռե-
րէ: Այս ժայռերը ունին զանազան
ձեւեր, կը նմանին սուրերու, փիղե-




րու եւ այլն: Կան ժայ-
ռեր, որոնց եթէ զար-
նէք՝ զանգակի ձայն կը
հանեն:

«Քարերու ան-
տառ»ին ճամբաները
խճճուած են, կարելի չէ
դիւրութեամբ գտնել ճամբայ, այս
պատճառով ալ պայման է հետեւիլ
ուղեցոյցի մը:

Անտառին ամէնէն գեղեցիկ բա-
ժինը կը կոչուի «Աշիմա»: Հոս կը
գտնուի ժայռ մը, որ նման է չինացի-
ներու առասպելական գեղուհին՝
«Աշիմայ»ին:

Ժայռերը մոխրագոյն են, բայց
անձրեւի տակ կը ստանան սեւ գոյն,
իսկ անձրեւէն ետք կը ստանան
տարբեր գոյն: Քանի մը օր ետք, սա-
կայն, անոնք կրկին կը վերադառ-
նան իրենց բնական գոյնին՝ մոխրա-
գոյնին:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

		5	3		2		7
	6			4		3	
3					6		4
4				1	6		
	2		7		5		1
		8		6			3
7			6				5
	9			7			4
6		3			2	1	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

8	6	7	1	3	9	2	4	5
1	4	9	2	5	8	6	7	3
3	2	5	4	6	7	9	1	8
9	8	1	7	2	6	3	5	4
4	3	6	9	8	5	7	2	1
7	5	2	3	4	1	8	9	6
6	7	8	5	1	2	4	3	9
5	9	4	6	7	3	1	8	2
2	1	3	8	9	4	5	6	7

Պատասխանը՝ յաջորդիւ



ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Գերմանիոյ ֆուլթպոլի կազմերէն:
2. Օդ - Մարդաբնակ - Ստացական դերանուն:
3. Նուաստ - Լկտի, հեշտամուր:
4. Հաճընի գիւղերէն - Սարսափ:
5. Ճատրակի հայրենի կրանտմասթր:
6. Մոհամէտի փեսան - Հերձուած - Կռտած ոչ-խար:
7. Ֆրանսայի 2013-ի լաւագոյն ֆուլթպոլիստին մականունը - Փոքրացնող մասնիկ:
8. Կովկասեան ժողովուրդ - Չայնանիչ:
9. Վահան Թէքէեանի երկերէն - Յիշատակէ՛:
10. Չիերու երամակ:
11. Հեծանոց - Ժրպրան Սալիլ Ժրպրանի երկերէն:
12. Չայնանիչ - Բուսնիլ - Ճատրակի հայրենի կրանտմասթրի մը մականունը:
13. Արական անուն - Չայնակից տառեր - Մանրէ՛:
14. Լրիկ - Փոքրացնող մասնիկ:
15. Սկաուտ - Մահմետական - Իրերայաջորդ գիրեր:
16. Նորապսակ կին - Փոքր Ասիոյ պատմական երկիրներէն:
17. Ժխտական մասնիկ - Թիւ, համրանք:
18. Մանկեռ - Ճատրակի աշխարհի 1985-2000 տարիներու ախոյեանին մականունը:
19. Ածականակերտ մասնիկ - Մէկուն դէմ չարիք նիւթել - Չեփիւռ:
20. Տրէ - Ոչնչութիւն - Չայնանիչ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

1. Հեքիաթ, շինճու պատմութիւն - Օրհասական:
2. Ֆրանսայի նախագահական նստավայրը - Իսահակեան գիւղի նախկին անունը:
3. Ափրիկեան երկիր - Իրլանտա՝ նախապէս:
4. Աշխարհահռչակ պուպրիկ մը - Յոգնակերտ մասնիկ - Հանքային հեղանիւթ - Չարդ:
5. Հաստատատական պատասխան - Պողատեսակ - Այբուբենէն - Ֆրանսական բաղաբ:
6. Մարսողական խողովակի վերջին մասը - Սպանախ - Բուսերէն՝ այո՛:
7. Հիւսիսային Ամերիկայի լիճերէն - Տառի մը անունը - Միւս - Ճերմակ շինանիւթ:
8. Արական անուն - Մոցուոր - Կալի բահաճեւ գործիք:
9. Իրերայաջորդ գիրեր - Դաշտ - Իշխանական արժող - Մառայութիւն:
10. Իգական օտար անուն - Տարածքի միաւոր - Կանացի օտար շարաթաթերթ - Անգոյր:
11. Իրաքեան լրատու գործակալութիւն - Արական օտար անուն - Չառիվայր - Արաբական օդանաւային ընկերութիւն մը:
12. Շրջուած՝ ընկոյզ - Սկովտիացի թենսիմէն:
13. Քնանալ - Գունաւորող նիւթ - Յարաբերական դերանուն:
14. Գրաբար՝ հասկցի՛ր - Ածականակերտ մասնիկ - Այբուբենէն - Գէչ:
15. Կարծարմաշկ - Չքանալ, ոչնչանալ - Սուտանի լիճերէն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15





Հ.Մ.Բ.Մ. ԱՆՄԵՆՈ